

**ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМЕНИ КОМИТАСА**

**ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ
ԴԱՍԱԽՈՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Պրակ 12/2022

**EDUCATIONAL METHODOLOGICAL COLLECTION
OF ARTICLES OF YEREVAN STATE CONSERVATORY
AFTER KOMITAS**

Volum 12/2022

**СБОРНИК УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИХ СТАТЕЙ
ПРЕПОДАВАТЕЛЕЙ ЕРЕВАНСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ
КОНСЕРВАТОРИИ ИМЕНИ КОМИТАСА**

Выпуск 12/2022

**ԵՐԵՎԱՆ
«ԵՊԿ հրատարակչություն»
2023**

**YEREVAN
“Publishing House YSC”
2023**

**ЕРЕВАН
“Издательство ЕГК”
2023**

Խմբագրական խորհուրդ՝

Նախագահ՝ Լ. Վ. Երնջակյան (երաժշտագետ, արևելագետ, արվեստագիտ. դոկտոր, պրոֆ.), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ), Ս. Հ. Հովհաննիսյան (խմբավար, ԵՊԿ ռեկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ, պրոֆ.), Ծ. Հ. Մովսիսյան (երաժշտագետ, արվեստագիտ. թեկնածու, դոցենտ, գիտ. գծով պրոռեկտոր), Օ. Յ. Նուրիջանյան (երաժշտագետ, արվեստագիտ. թեկնածու, ԵՊԿ գիտական քարտուղար), Ի. Լ. Զոլոտովա (ղաշնակահար, մե-թոդաբան, արվեստագիտ. դոկտոր, պրոֆ.), Լ. Կ. Եփրեմյան (երաժշտագետ, կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, առընթեր միջոցիսցիպլինար գիտությունների կենտրոնի ղեկավար, արվեստագիտ. թեկնածու, դոցենտ), Ա. Ս. Արևշատյան (երաժշտագետ, միջնադարագետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտ. դոկտոր, պրոֆ.), Ա. Ա. Փահլևանյան (ֆոլկլորագետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտ. թեկնածու, պրոֆ., մեթոդաբան), Ս. Գ. Սարաջյան (ղաշնակահար, պրոֆ., Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ, «ԵՊԿ հրատարակչության» հրատարակչական խորհրդի նախագահ), Գ. Կ. Շազոյան (երաժշտագետ, մեթոդաբան, «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-հրատարակիչ, գլխավոր խմբագիր), Կ. Ռ. Օհանյան (ղաշնակահար, պրոֆ., մասնագիտական ղաշնամուրի ամբիոնի վարիչ), Գ. Պ. Գեղամյան (մեներգչուհի, պրոֆ., մեներգեցողության ամբիոնի վարիչ), Զ. Դ. Ղազարյան (ղաշնակահար, կոնցերտմայստեր, Կոնցերտմայստերության ամբիոնի վարիչ), Ն. Կ. Զարիֆյան (կոմպոզիտոր, պրոֆ., մեթոդաբան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, փոփ-ջազային երաժշտության ամբիոնի վարիչ), Ա. Ս. Կոսեմյան (ալտահար, պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, լարային գործիքների ամբիոնի վարիչ):

Հիմնադիրներ՝ ԵՊԿ, Ս. Գ. Սարաջյան և Գ. Կ. Շազոյան, ութ տարի ընդհատումից հետո վերահիմնվել է ԲՈՒԿ-ի Հր. 86Ա Հավելված 28.12.2018 կետ 2-ի, ԵՊԿ ռեկտոր, պրոֆ., Ս. Հ. Հովհաննիսյանի, արվեստագիտ. թեկնածու, դոցենտ, գիտության գծով պրոռեկտոր Ծ. Հ. Մովսիսյանի որոշմամբ 2019 թվականից

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու, Պրակ 12/2022. - Եր.: ԵՊԿ հրատարակչություն, 2023 թ., 192 էջ:

Սույն ժողովածուն կազմված է ուսումնամեթոդական հոդվածներից, նախատեսված երաժշտական բուհերի դասախոսների և մասնագետների համար: Այն նպատակ ունի ծանոթացնելու ուսումնական գործընթացին առնչվող երաժշտական արդի ճյուղային մեթոդաբանության խնդիրների հետ:

ՆԱԽԱԲԱՆ

Հրատարակվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների Պրակ 12/2022 թ. ժողովածուն: Կոնսերվատորիայի կարևորագույն ոլորտն է հանդիսացել մասնագիտական գրականության հրատարակումը:

ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հարուստ փորձի, հմտության, կրթական, ուսումնական և մեթոդաբանական առաջնահերթությունների արծարծումը, նրանց գիտական, դասավանդման մեթոդների և ստեղծագործական ներուժի արգասիքն են: Կոնսերվատորիան ունի 19-ամյա հրատարակչություն, որը պահանջված և օրակարգային է բուհի գիտական և ուսումնամեթոդական ոլորտին վերաբերող բնագավառներում:

Այս գործի իրականացման կարևորագույն նախադրյալը «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադրումն էր 1998 թվականին, այն ժամանակվա ԵՊԿ ռեկտոր Արմեն Սմբատյանի և երաժշտագետ Գոհար Շագոյանի ջանքերով: Տարիներ անց, ԵՊԿ դարձավ ՊՈԱԿ 2003-ին, և իրավունք ունեցավ 2004-ին ռեկտոր Սերգեյ Սարաջյանի նախաձեռնությամբ, պարբերականի խմբագրական կազմի և հիմնադիր-գլխավոր խմբագիր Գոհար Շագոյանի գործուն մասնակցությամբ հիմնադրվեց «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրատարակչությունը» («ԵՊԿ հրատարակչություն»): Այն կոնսերվատորիայի գիտահրատարակչական կրթական ու ստեղծագործական կարևոր ստորաբաժանում է, որը ղեկավարվում է ՀՀ համապատասխան օրենքներով, ԵՊԿ Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի, «ԵՊԿ հրատարակչական» խորհրդի որոշումներով և կանոնակարգով, ԵՊԿ կանոնադրությամբ և, որպես բուհի հրատարակչություն գործում է ռեկտորի անմիջական ղեկավարությամբ և ենթակա է բուհի գիտության գծով պրոռեկտորին:

«ԵՊԿ հրատարակչության» առաջնահերթ նպատակն է կազմակերպել և իրականացնել մասնագիտական գրքերի, դասագրքերի, ձեռնարկների, ժողովածուների, կրթական և ուսումնական ծրագրերի, մեթոդաբանական և նոտային գրականության հրատարակման գործընթացը և տեղեկատվական ներկայացուցչություն ապահովել հրատարակված գրականության համար: «ԵՊԿ հրատարակչություն» իր գործունեության 19-ամյա պատմության ընթացքում լույս է ընծայել շուրջ 131 հրապարակումներ՝ 7 դասագիրք, ուսումնամեթոդական 12 ժողովածու (13 գրքով), ձեռնարկներ, գրքույկներ, տարբեր առարկայական դասընթացների ծրագրեր, բազմաթիվ նոտային գրականություն, որոնք կոնսերվատորիայի ամբիոններում, գիտական խմբերում իրականացվող ստեղծագործական աշխատանքի լավագույն վկայությունն են: Վերը նշած ցուցակից բացի ԵՊԿ պաշտոնական մամուլը՝ ամսագիր «Երաժշտական Հայաստան» 65 հեթրական համար 2023 թվականով և 210 հեթրական համարով «Երաժիշտ» ամսաթերթը 2023-ի հունիսի դրությամբ: 2023 թվականից սույն ժողովածուն գրանցվեց որպես պարբերական՝ ուսումնամեթոդական հոդվածների գիտական ժողովածու ISSN միջազգային ինդեքսավորմամբ և գրանցմամբ նաև գիտական DOI համակարգում:

Սույն Ժողովածուն 2004-2012 թթ. ընթացքում «ԵՊԿ հրատարակչությունում» պարբերաբար լույս է տեսել ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմի գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների որպես ամենամյա ժողովածու, որոնցում դասախոսներն իրենց մեթոդական գիտելիքներն ու փորձառությունն են փոխանցում երիտասարդ մասնագետներին և ուսանողներին՝ կրթական այժմեական միտումներին համընթաց որոնելով և առաջարկելով դասավանդման նոր ուղիներ ու մեթոդներ: 2019 թվականից վերասկսվել է Ժողովածուի հրատարակումը՝ վերահիմնադրվելով համաձայն ՀՀ ԲՈԿ-ի 28.12.2018 թ. Հր. 86Ա Հավելված N 86 Ա հրամանի: Ներկա ժողովածուն, որը հերթական համարով տասներկուերորդն է, ներառում է 2022 թվականի ուսումնամեթոդական հոդվածները:

Ժողովածուի խմբագրական խորհրդի կազմում են խմբավար, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ռեկտոր՝ Ս. Հ. Հովհաննիսյանը, երաժշտագետ, արևելագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ՝ Լ. Վ. Երնջակյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, գիտության գծով պրոռեկտոր՝ Ծ. Հ. Մովսիսյանը, դաշնակահար, մեթոդաբան, պրոֆեսոր, ՀՀ և Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ, «ԵՊԿ հրատարակչության» խորհրդի նախագահ՝ Ս. Գ. Սաբաշյանը, դաշնակահար, արվեստագիտության դոկտոր, մեթոդաբան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ՝ Ի. Լ. Ջոլտովան, արվեստագիտության թեկնածու, մեթոդաբան, դոցենտ, Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, առընթեր միջոցառողի մար գիտություն-ների կենտրոնի ղեկավար՝ Լ. Կ. Եփրեմյանը, երաժշտագետ, միջնադարագետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Արևշատյանը, ֆոլկլորագետ, արվեստագիտ. թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ՝ Ա. Ս. Փահլևանյանը, «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ և գլխավոր խմբագիր, երաժշտագետ, մեթոդաբան, հրատարակիչ՝ Գ. Կ. Շագոյանը և համապատասխան գրվող հոդվածների ամբիոնի վարիչները: Հոդվածները, համաձայն ՀՀ ԲՈԿ-ի պահանջների, ներկայացվում են համապատասխան ամբիոնների մասնագետների երաշխավորությամբ, ունեն 2-ական գրախոսություն, երեք լեզվով ամփոփումներ, բանալի բառեր, տեղեկություններ հեղինակների մասին:

«ԵՊԿ հրատարակչության» գործունեությունը կոնսերվատորիայի համար ունի մտավոր սեփականության պահպանման ու զարգացման հիմնարար նշանակություն և հաստատելով իր դիրքերը որպես բուհի գիտական ուսումնական գործընթացի կատարելագործման, նոր ուղիների որոնման արդիական լաբորատորիա:

ԳՈՀԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ

Ժողովածուի հիմնադիր-կազմող, երաժշտագետ, հրատարակիչ «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր-վարիչ

**ԼԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ԱՍԲԻՈՆ**

**DEPARTMENT OF
STRIGED INSTRUMENTS**

**КАФЕДРА
СТРУННЫХ ИНСТРУМЕНТОВ**

ՆԱՐԻՆԵ ԳԼԱՍԵՎՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Թավջութակահարուհի, Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիայի դասախոս**

E-mail: narineharutyunyan018@gmail.com

Doi: 10.58580/29538041-2022.12-6

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ա. Ս. Կոստե-
յանի և լարային ամբիոնի կողմից՝ (16.12.2022 թ.): Գրա-
խոսների՝ (11.1.2023 թ.) և (26.12.2022 թ.), հեղինակը ներկա-
յացրել է հրատարակության՝ (10.12.2022 թ.):

ԺԱՆ-ԼՈՒԻ ԴՅՈՒՊՈՐ ԵՎ ՆՐԱ «ԴՊՐՈՑ»-Ը

Ամփոփում

Հեղինակը ներկայացնում է XVIII դ. երկրորդ կեսի ֆրանսիական թավջութակի դպրոցի զարգացումը, որի վառ ներկայացուցիչն է Ժան Լուի Դյուպորը: Պատմականորեն լինելով առաջին փորձ, այս «Դպրոց»-ը համարվում է թավջութակի ֆրանսիական կատարողական արվեստի յուրատեսակ ուղեցույց: Խոսվում է նրա դերի՝ գործիքին տիրապետելու, մատների դասավորության գրիֆի և աղեղի վրա, գործիքին տրված ինքնուրույնության մասին: Հարկ է նշել Դյուպորի «21 էտյուդներ»-ի ժողովածուն, որը թավջութակի կատարողական արվեստում մեծ ճանաչում է ձեռք բերել իր երկձայն նոտաների և տեխնիկական այլ հնարքների օգտագործմամբ և կիրառվում է աշխարհի բազմաթիվ երաժշտական ուսումնական հաստատություններում: Հոդվածի երկրորդ մասը նվիրված է Ռ. Շումանի թավջութակի կոնցերտի վերլուծությանը:

Բանալի-բառեր. Դյուպոր, «Դպրոց», դեկա, կոնցերտ, գամմա, տրիոլ, գրիֆ, կոնտրաստ, ռեզիտատիվ-մենանվագ, նոկտյուրն, տրիո:

Abstrakt

Narine Glasevos Harutyunyan, cellist, lecturer at Yerevan Komitas State Conservatory - “Jean-Louis Duport and her “School””.

The author presents the development of the French cello school of the second half of the 18th century, and Jean-Louis Duport is a prominent representative of it. Historically being the first attempt, this “School” is considered a unique guide to the French performing art of cello playing. The article discusses his

role in mastering the instrument, the placement of the fingers on the finger-board and bow, as well as the autonomy given to the instrument. Duport's collection "21 etudes", widely recognized in the performing art of cello playing with its use of two-part notes and other technical tricks and used in many musical educational institutions around the world is worthy of note. The second part of the article is devoted to the analysis of Schumann's cello Concert.

Key words: Dupor, "School", deka, gamma, Concert, triol, grif, contrast, recital-solo, Nocturne, trio.

Աբստրակտ

Վիոլոնչелиստկա, преподаватель Ереванской государственной консерватории имени Комитаса **Нарине Гласовосовна Арутюнян**. - «**Жан-Луи Дюпор и его "школа"**».

Автор представляет развитие французской виолончельной школы второй половины XVIII в., ярким представителем которой является Жан-Луи Дюпор. Эта «школа», исторически являющаяся первой попыткой, считается уникальным путеводителем по французскому исполнительскому искусству игры на виолончели. В статье говорится о его роли в овладении инструментом, о расположении пальцев на грифе и смычке, о самостоятельности, данной инструменту. Следует упомянуть сборник «21 этюд» Дюпора, получивший широкое признание в исполнительском искусстве игры на виолончели с использованием двойных нот и других технических приемов и используемый во многих музыкальных учебных заведениях мира. Вторая часть статьи посвящена анализу виолончельного концерта Р. Шумана.

Ключевые слова: Дюпор, «школа», дека, гамма, концерт, триоль, гриф, контраст, речитатив-соло, ноктюрн, трио.

Ներածություն

(Ֆրանսիական թավջութակի դպրոցը)

XVIII դ. երկրորդ կեսը համարվում է համաշխարհային երաժշտական կոմպոզիտորական և կատարողական արվեստի բուռն զարգացման ժամանակաշրջան:

Սասնավորապես այն դրսևորվեց շատ եվրոպական երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան և այլն:

Թավջութակի կատարողական արվեստը. XVIII դ. կեսին արդեն ներկայանում էր ստեղծագործություններով, որոնք գրված էին

տվյալ գործիքի՝ թավջութակի համար: Երևան էին գալիս տարբեր կատարողներ, որոնք առաջարկում էին իրենց մոտեցումը, տեսակետը, տարբեր հնարքները՝ կապված թավջութակ գործիքի հետ:

Ժան-Լուի Դյուպորը.

Ֆրանսիական թավջութակի դպրոցի հիմնադիրը

Ստեղծվում է «դպրոց» (школа) հասկացությունը: Դրա վառ ներկայացուցիչը հանդիսացավ Ժան-Լուի Դյուպորը, որը ֆրանսիական թավջութակի դպրոցի հիմնադիրներից է:

Այդ ժամանակաշրջանում էին հանդես գալիս նաև թավջութակահար ՄիշելԿորետը, Բերտոն, ջութակահար Վիոտտին: Լինելով երաժիշտ կատարող նրանցից յուրաքանչյուրը մշակում էր իր մեթոդը՝ կապված աղեղի ճիշտ օգտագործման, մատների դասավորության, ձայնի արտաբերման, նրա արտահայտչականության հետ: Պետք է նշել, որ միշտ չէ, որ դրանք ընդունվում էին երաժիշտ-կատարողների կողմից:

Դյուպորը, ինքը լինելով թավջութակահար, մեծ ներդրում ունեցավ գործիքի կատարողական արվեստը նոր հիմքերի վրա դնելու գործում: Ստեղծեց իր «Դպրոց»-ը: Այն նաև անվանում են թավջութակի դրվածքի և աղեղի կառավարման փորձ:

Այն բաղկացած է 18 գլխից, որտեղ մտնում են այնպիսի հնարքներ, ինչպիսին են օրինակ թավջութակ լարելը, գործիքը ճիշտ պահելը, ձախ ձեռքի պահվածքը, գամմաների ուղղորդված հաջորդականությունը՝ առանց բաց լարերի օգտագործման, ֆլաժոլետ, տրիոլներ, վարժություններ, որոնք մատները կգարգացնեն, ավելի ճկուն դարձնելով:

Հատուկ ուշադրություն է դարձվում ռեզոնանսային ձայներին՝ օբերտոններին, որոնց պարագայում կարելի է հասնել ինտոնացիայի մաքսիմալ մաքրության:

Դյուպորը հիմնեց նաև երաժիշտ կատարողի ճիշտ նստելսձևը:

Ըստ Դյուպորի՝ պետք է նստել աթոռի ծայրին, գործիքը ոտքերով պահել այնպես, որ ներքևի մասի անկյունը հենվի ձախ ոտքի ծնկին: Իհարկե այն չի կարող հանդիսանալ, որպես միակ նստելաձև, քանի որ յուրաքանչյուր կատարող կարող է ունենալ տարբեր մոտեցում այս հարցին՝ կապված մարմնի կառուցվածքի հետ և այլն...

Ինչ վերաբերում է ձախ ձեռքին, ապա Ղյուպորը պահանջում է, որ բութ մատը գտնվի թավջութակի վզիկի վրա՝ առաջին և երկրորդ մատների միջև (ի դեպ, պետք է նշել, որ այս դասավորությունը պահպանվում է մինչև օրս, հանդիսանալով լավագույն տարբերակ), որը նպաստում է դիրքերի ավելի ճկուն փոփոխությանը:

Մնացած մատները դասավորվում են գրիֆի վրա կիսակլոր, որքան հնարավոր է ծայրերի մասով: Իհարկե կան կատարողներ, որոնք այս դրվածքն այնքան էլ չեն ընդունում (մանավանդ երբ կատարվում են ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ):

Ըստ Ղյուպորի, մատները պետք է լինեն լարերին հնարավորինս շատ մոտիկ, որը շատ կարևոր է, մանավանդ երբ տրիոլներ են կիրառվում:



Ժ. Ղյուպորի ապալիկատուրան և տրիոլների կիրառումը

J. Dupore's applicator and his use of triols

Аппликатура Ж. Дюпора и использование триолей

«Գրիֆի ճիշտ օգտագործումը լավ նվագելու համար մեկ պայմանն է», - ասում է նա:

Իսկ գրիֆի ճիշտ կիրառումը խթան է հանդիսանում լավ տիրապետելու առաջին չորս դիրքերին (позация): Նա կտրակամապես դեմ է նույն մատի օգտագործմանը որևէ նոտայից հետո:

Դյուպորի «Դպրոց»-ը մեծ դեր խաղաց թավջութակի կատարողական արվեստի զարգացման գործում, տալով գործիքին և նրա հնարավորություններին լայն ասպարեզ: Թերևս ոչ լիովին հասունացած, մասամբ սահմանափակ, բայց պատմականորեն այն առաջին փորձն էր թավջութակ գործիքին տալ կատարողական նոր աստիճանի հասցնելու:

Բոլոր դեպքերում այն թավջութակի կատարողական արվեստի, նրա հնարավորությունների ճիշտ ըմբռնումն էր:

Գործիքը ստացավ ինքնուրույնություն և այսօր էլ «Դպրոց»-ը իր մոտեցման հիմնական դրույթներով միանգամայն համապատասխանում է ժամանակակից թավջութակային կատարողական արվեստի պահանջներին:



**Ռ. Շուման թավջութակի և նվագախմբի Կոնցերտ (op. 129, a-moll)
2-րդ մաս**

**R. Schumann. Concerto for Cello and Orchestra (op. 129, a-moll)
Part Two**

**Р. Шуман. Концерт для виолончели с оркестром (op. 129, a-moll)
Вторая часть**

Ժողովածուն ունի իհարկե որոշ թերություններ. օրինակ բացակայում է դիրքերի հաջորդականությունը, չկան կատարման գեղարվեստական լուծմանը վերաբերող դրույթներ: Ձեռնարկի կարևորագույն ձեռքբերումն ապակիկատության է. այն կարծես դարձավ Դյուպորի «ռեֆորմը», որը հաստատեց գործիքի ապակիկատության ճիշտ օրենքը՝ համապատասխանեցնելով ձեռքի կառուցվածքը և գործիքը:

Ժամանակի ընթացքում այդ հնարավորությունները մեծանում էին, զարգանում և ստանում նորանոր հնարավորություններ: Այսօր այդ հնարավորությունները շատ ավելի մեծ թռիչք են կատարել, դարձնելով թավջութակի կատարողականությունը էլ ավելի ճկուն, էլ ավելի վիրտուոզ:

Երբ խոսում ենք թավջութակի ֆրանսիական դպրոցի հիմնախնդիրների, նրա կատարողական նվաճումների մասին, հարկ է նշել, որ այն տարածում է գտնում մաև Եվրոպայի մյուս երկրներում ևս. Անգլիա, Գերմանիա, Ավստրիա, Ռուսաստան և այլուր:

Թավջութակի արվեստն ստանում է ավելի լայն հնարավորություններ. ի ցույց դնելով գործիքի, նրա ձայնային արտահայտչամիջոցների նոր կիրառումներ:

Կոմպոզիտորներն անդրադառնում էին արդեն ավելի մեծ կտավի ստեղծագործությունների (օպերա, սիմֆոնիա, օրատորիա, կոնցերտ՝ նվագախմբի հետ): Որոնց վառ ներկայացուցիչներն էին Բեթհովենը, Վեբերը, Բրամսը, Դվորժակը, Ռոսինին, վագները, Շումանը, Չայկովսկին...

Ի հայտ են գալիս ավելի դրամատիկ, արտահայտիչ էլեմենտներ, որոնք էլ՝ ավելի մեծ նշանակություն են տալիս թավջութակին, որպես մենակատար գործիք:

Ասպարեզ են գալիս, որպես մեծ կտավի ստեղծագործություն թավջութակի կոնցերտները, որոնք գրվում են ոչ թե միայն պրոֆեսիոնալ թավջութակահարների կողմից, այլ այնպիսի կոմպոզիտորների, ինչպիսիք են Դվորժակը, Սեն-Սամսը, Լալուն, Շումանը:

Գրվեց Բեթհովենի եռակի կոնցերտը, որտեղ թավջութակը հնչում է դաշնամուրի և ջութակի հետ համահավասար, Բրամսի կրկնակի կոնցերտը ջութակի, թավջութակի համար նվագախմբի ընկե-

րակցությամբ:

Սա մի յուրատեսակ նորարարություն էր...

Ստեղծվեցին թավջութակի համար գրված կոնցերտներ Սեն-Սանսի, Լալոյի, Շումանի, Դվորժակի կողմից:

Սիմֆոնիկ ժանրում թավջութակը, որպես մենամկազ գործիք, իր փայլուն դրսևորումը գտավ վերոհիշյալ կոմպոզիտորների ստեղծագործություններում:

Եվ պատահական չէր, որ Ռ. Շումանը, որպես ռոմանտիկ կոմպոզիտոր, անդրադարձավ թավջութակին, որպես մենակատար գործիք, քանի որ երիտասարդ տարիներին ինքն էլ է նվագել թավջութակ և նրան շատ մոտ էր գործիքի երգային, էմոցիոնալ տեմբրը, արտահայտչական միջոցները և հախուռն երաժշտական լուծումները:

Կոնցերտը գրվեց 1850 թ. (*op. 129 a-moll*):

Այն պատկանում է կոմպոզիտորի հասուն շրջանի ստեղծագործությունների թվին: Առանձնանում է բովանդակային խորությամբ և դասական ռոմանտիզմի յուրահատկությունների դրսևորմամբ:


Չնայած կոնցերտը բաղկացած է մեկ մասից, այն ունի եռամաս կառուցվածք (որն ի դեպ նույնպես նոր, քայլ է կոնցերտային պրակտիկայում), որոնք կատարվում են մեկը մյուսի ետևից՝ կազմելով մի սեղմ ցիկլ, որը շատ բնորոշ էր այդ ժամանակի ռոմանտիկներին:

Ռոմանտիկ հուզական մասին հաջորդում է արտահայտիչ դանդաղ մասը: Այնուհետև դրան հաջորդում է ֆինալը, որը աչքի է ընկնում իր անհանգիստ բնույթի ռիթմով: Արագ մասերը գրված են դասական սոնատային ալլեգրոյի ձևով, որոնք առանձնանում են իրենց լիրիզմով և դրամատիկ հուզականությամբ:

Կոնցերտն սկսվում է գլխավոր թեմայի շարադրմամբ: Այն հուզական է, կրում է դրամատիկ բնույթ: Դրան հակադրվում է մշակման մասը՝ իր դեկլամացիոն բնույթով, ընդհանուր քնարական մթնոլորտն ուղեկցում է ամբողջ կոնցերտի ընթացքում:

Թավջութակը երգում է գլխավոր թեման՝ նվագախմբի ջութակների նվագակցությամբ: Կա ներքին անհանգստություն, որը հետըզիետես հարստանում է սինկոպաների, արագ երաժշտական

թռիչքների շնորհիվ՝ նրանց տալով վիրտուոզ բնույթ: Իսկ մշակման մասի թեմաները զարգանում են և միահյուսվելով դառնում պոլիֆոնիկ ամբողջություն:



Ռ. Շուման քալջութակի և նվագախմբի Կոնցերտ (op. 129, a-moll)
1-ին մաս. գլխավոր և օժանդակ պարտիաներ

R. Schumann Concerto for cello and orchestra (op. 129, a-moll).
Main and secondary partias of Part One

P. Шуман. Концерт для виолончели с оркестром (op. 129, a-moll),
главная и побочная партии первой части

II մասը (*Dangstam*) կարելի է ընդունել, որպես նոկտյուրն, կամ ռոմանս: Այն քնարական է, լի հուզական արտահայտչականությամբ, նուրբ հնչեղանգների հաջորդականությամբ, զգացմունքայնությամբ:

Միջին մասում քալջութակի տեմբրը դառնում է ավելի երազալի:



**Ռ. Շուման. Քավչութաւկի և նվագախմբի Կոնցերտ (օր. 129, a-moll)
2-րդ մաս**

**R. Schumann. Concerto for cello and orchestra (op.129, a-moll)
Part Two**

**Р. Шуман. Концерт для виолончели с оркестром (op. 129, a-moll).
Вторая часть**

Այնուհետև մենակատարին է միանում նվագախմբի թավջութակների կոնցերտմայստերը և 2 թավջութակների միջև սկսվում է մտերմիկ զրույց, նրանց միանում է նվագախումբը և արդյունքում հնչում է արդեն սքանչելի տրիո:

Միջանկյալ մասում իրար են հակադրվում առաջին մասի սկիզբը և թեմայի դրամատիկ դրվագը, որը կարծես, մենակատար գործիքի հախուռն խառնվածքի պատասխանն է: Սա կոնցերտի կուլմինացիոն կետն է:

Դարձյալ հնչում է կոնցերտի II մասի հիմնական թեման, սակայն ոչ թե լիրիկական-երազային, այլ դրամատիկ-հաղթական, որը տանում է դեպի ֆինալ:

Այն կրում է հերոսական բնույթ, որի հիմքում քայլերգի ռիթմն է: Այստեղ հակադրվում են գլխավոր և հարակից մասերը: Մշակման մասը հնչում է մեկ վեհաշուք, մեկ հունորային, հիշեցնելով առաջին մասի թեման:

Ռեպրիզան սկսում է նվագախումբը (*tutti*): Վերականգնվում է տոնայնությունը (*A-dur*), որը պահպանում է կոնցերտի լավատեսական տրամադրությունը և տանում դեպի ավարտ (*Coda*): Հնչում է ընդլայնված ռեչիտատիվ-մենանվագը:



**Ռ. Շուման. թավջութակի և նվագախմբի Կոնցերտ (օր. 129, a-moll)
Կադենցիա-ռեչիտատիվ**

**R. Schumann, Concerto for cello and orchestra (op. 129, a-moll)
Cadencia-recitative**

**Р. Шуман Концерт для виолончели с оркестром (op. 129, a-moll)
Каденция-речитатив**

Շումանի կոնցերտը կատարողից պահանջում է գեղարվեստական հասունություն, գործիքի տեխնիկապես լիիրավ տիրապետում՝ որանք են փայլուն պասսաժները, շտրիխները (*legato, detache, spicato*, նաև թռչող *spicato*, կրկնակի նոտաներ):

Կատարողի հիմնական խնդիրն է կերտել այն երաժշտական մթնոլորտը, որտեղ գերիշխում է պոետիկ լիրիկան՝ լի դրամատիկ հուզականությամբ, երազային, կրքոտ և միևնույն ժամանակ թափանցիկ:

Կոնցերտն առաջին անգամ հնչել է Լայպցիգում 1860 թ.: Այն համարվում է թավջութակի կատարողական արվեստի գոհարներից մեկը, իրավամբ զբաղեցնելով իր ուրույն տեղը համաշխարհային թավջութակի կատարողական արվեստի նվագացանկում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гинзбург Л. С., История виолончельного искусства., I изд., М.-Л.: Музгиз., 1950, - 250 с.

2. Гинзбург Л. С., История виолончельного искусства., II изд., книга IV, М.: Музыка., 1978.

Ginzburg L. N., History of Cello Art, 1st edition, M.-L.: Muzgiz., 1950, - 250 pages.

Ginzburg L. N., History of Cello Art., 2nd edition, book IV, M.: Musica, 1978.

REFERENCES

1. Ginzburg L. S., Istoriya violonchel'nogo iskusstva., I izd., M.-L.: Muzgiz., 1950, - 250 s.

2. Ginzburg L. S., Istoriya violonchel'nogo iskusstva., II izd., kniga IV, M.: Muzyka., 1978.

Հեղինակի մասին. ՆԱՐԻՆԵ ԳԼԱՍԵՎՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ծ. 06.09. 1953 թ., ավարտել է՝ ԵՊԿ նվագախմբային բաժինը թավջութակ մասնագիտությամբ (պրոֆ. Բ. Վ. Զառչյանի դասարանը) և Մոսկվայի Չայկովսկու անվ. կոնսերվատորիայի ասպիրանտուրան (պրոֆ. Մ. Է. Խոմիցերի դաս.) Անդրկովկասյան IV մրցույթի դափնեկիր է: Դասավանդել է Երևանի Չայկովսկու անվ. դպրոցում (1977-1994), 1994-ից մինչև 2009 թ. գործուղվել է Բեյրութ և դասավանդել է Բ. Կանաչյանի անվան երաժշտական քոլեջում, վարել է թավջութակի մասնագիտական դասարանը: 2009-ից առ այսօր դասավանդում է՝ ԵՊԿ, որպես դասախոս լարային կվարտետի ամբիոնում:

Об авторе: НАРИНЕ ГЛАСЕВОСОВНА АРУТЮНЯН (род. 06.09.1953). Окончила: оркестровый факультет ЕГК по специальности виолончель (класс проф. А. Чаушьяна) и аспирантуру Московской госконсерватории им. Чайковского (класс проф. М. Хомицера). Лауреат IV Закавказского конкурса музыкантов-исполнителей. Преподавала: в спец. муз. школе им. Чайковского (1977-1994), в Бейрутском музыкальном колледже им. Б. Каначяна (1994-2009); преподаватель кафедры струнного квартета ЕГК (с 2009 по сей день).

About the author: NARINE GLASEVOS HARUTYUNYAN (born 06.09.1953) - She graduated from Orchestra Department of YSC in cello (class of Prof. A. H. Chaushyan) and completed Moscow Tchaikovsky Conservatory post-graduate course (class of Prof. M.E. Khomitser). She is a laureate of the IV Transcaucasian contest. She taught at the Yerevan Tchaikovsky music school (1977-1994), from 1994 to 2009 she was sent to Beirut on business and taught a professional cello class at Kanachyan Music College. Since 2009, she has been teaching at the Chair of String Quartet, YSC.

ՆԱՐԻՆԵ ԳԼԱՍԵՎՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Թավջութակահարուհի, Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիայի դասախոս*

E-mail: narineharutyunyan018@gmail.com

Doi: 10.58580/29538041-2022.12-17

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ա. Ս. Կոստանյանի և լարային ամբիոնի կողմից՝ (16.12.2022 թ.): Գրախոսներին՝ (22.12.2022 թ.) և (27.12.2022 թ.), հեղինակը ներկայացրել է հրատարակությանը՝ (10.12.2022 թ.):

ԹԱՎՋՈՒԹԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ «ՈՍԿԵ ԴԱՐԸ» ՄՍՏԻՍԼԱՎ ՌՈՍՏՐՈՊՈՎԻԶ

Ամփոփում

Հոդվածը նվիրված է աշխարհառչակ թավջութակահար Մստիսլավ Լետպոլդի Ռոստրոպովիչի գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին, դասավանդման մեթոդաբանության որոշ հարցերի: Հեղինակը մեջբերումներ է կատարում Ռոստրոպովիչի ասույթներից հաստատելով իր առջև դրված հիմնախնդիրները: Ռոստրոպովիչին ներկայացնում է որպես համաշխարհային պատմության մեջ իր դերը արձանագրած անհատ-մտավորականի, որպես թավջութակի կատարողական արվեստը նոր մակարդակի հասցնող, անգուգական կատարող, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ: Ներկայացնում է նրա դասավանդման դրույթները մեծանուն թավջութակահարի վարպետության դասերի, դասախոսությունների միջոցով: Հոդվածագիրն անդրադառնում է նրա համերգային գործունեությանը նույնպես: Քանի որ նա ներկա է գտնվել Ռոստրոպովիչի դասերին նաև կիսվում է իր անձնական տպավորություններով, նրա դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ կատարում եզրահանգումներ և ընկալում նրա խոսքերը որպես պատգամ թավջութակահարներին: Նշում և վերլուծում է նրա սիրելի և բազմիցս կատարված ստեղծագործություններից Յ. Ս. Բախի Սյուիտները:

Բանալի-բառեր. թավջութակահար, դիրիժոր, կոնցերտմայստեր, կոնսերվատորիա, սյուիտ, Յ. Ս. Բախ:

Abstract

Cellist, teacher at Yerevan Komitas State Conservatory Narine Glasevos

Harutyunyan. - "The Golden Age of Chello Performing Art: Mstislav Rostropovich".

The article is devoted to some issues of the activity, pedagogical approaches, and teaching methodology of the world-famous cellist Mstislav Leopold Rostropovich. The author presents quotes from Rostropovich's sayings, confirming the problems set, as well as his teaching principles through the famous cellist's master classes and lectures. Having observed Rostropovich's lessons, she also shares her personal impressions, draws conclusions about his teaching methodology and perceives his words as a message to cellists. She mentions and analyzes one of the favourite and frequently performed works, Y. S. Bach's Suits.

Key words: cellist, conductor, concertmaster, conservatory, suite, Y. S. Bach.

Աբստրակտ

*Վիոլոնչелиստկա, преподаватель Ереванской государственной консерватории имени Комитаса **Нарине Гласовосовна Арутюнян.** - "Золотой век виолончельного исполнительского искусства: Мстислав Ростропович".*

Статья посвящена деятельности всемирно известного виолончелиста Мстислава Леопольдовича Ростроповича, его педагогическим подходам, некоторым вопросам методики преподавания. Автор цитирует высказывания Ростроповича, освещающие стоявшие перед ним проблемы. Свои принципы преподавания знаменитый виолончелист представляет через мастер-классы, лекции, освещается и его концертная деятельность. Так как автор статьи посещала уроки Ростроповича, то она делится и своими личными впечатлениями, делает выводы о методике преподавания и воспринимает его слова как послание виолончелистам. В статье упоминается и анализируется одно из любимых и часто исполняемых им произведений - Сюиты И.С. Баха.

Ключевые слова: виолончелист, дирижер, концертмейстер, консерватория, сюита, И.С.Бах.

Ներածություն

«Մատիսլավ Ռոստրոպովիչ - այս անունը թավջութակի արվեստի մի ամբողջ դարաշրջան է, որը բացեց գործիքի լայն հնարավորությունները՝ տալով կատարողական արվեստի առջև դրված շատ նոր խնդիրների լուծումներ»:

Դ. Շոստակովիչ

Կենսագրական փաստեր

Տաղանդավոր թավջութակահար Լեոպոլդ Ռոստրոպովիչի որդին, սկսել է իր ուսումը հոր մոտ: Դեռևս 4 տարեկան հասակում Սլավան անուն է իր առաջին քայլերը երաժշտության ասպարեզում. հորինում է պոլկա դաշնամուրի համար: Իսկ արդեն 13 տարեկանում հանդես է գալիս Սեն-Սանսի Կոնցերտով՝ զրված թավջութակի և նվագախմբի համար:

Առաջին ելույթը Սլավյանսկ քաղաքի բացօթյա միջոցառումն էր, որը շատ խորն է դրոշվում երաժշտի հիշողության մեջ:

Այնուհետև հայրենական պատերազմ, հոր վախճանը, բազմաթիվ տեղափոխությունները քաղաքից-քաղաք ծանր ապրումների տեղիք էին տալիս պատանու մոտ:

1946 թ. ընդունվում է Մոսկվայի կոնսերվատորիա, որտեղ միաժամանակ սովորում է երկու մասնագիտական դասարաններում, թավջութակ՝ Ս. Կոզլուպովի և կոմպոզիցիա՝ Վ. Շերալինի մոտ:

Փայլուն ավարտելով կոնսերվատորիան, սկսվում է Ռոստրոպովիչի բուռն համերգային գործունեությունը: *«Դա մի շրջան էր, երբ շատ լավ նվագելու անասելի ցանկություն ունես: Ինձ կոփում էր, այն ժամանակներում ընդունված սուր քննադատությունը, որը երբեմն ճիշտ էր, երբեմն՝ ոչ: Բայց դա ինձ օգնում էր մտածել, որոնել»* (Ռոստրոպովիչ):

Կատարողական երկացանկը

Անասելի մեծ է երաժշտի կատարած ստեղծագործությունների ցանկը՝ Դվորժակի հիանալի կոնցերտը, որտեղ համատեղվում են թավջութակի էնոցիոնալ տեմբրը և լարված ելևէջներով դրամատիզմը, որը երբեմն վերածվում է սարկազմի: Այնուհետև Շուսման, Բրամս, Բեթհովեն... Այսպես կարելի է անվերջ թվարկել:

Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ զգացվում է նրա ան-

հատական մոտեցումը, արտահայտչամիջոցների կիրառումը, պատճառաբանումը:

Մեկանբանումներ

Բախի վեց սյուիտները թավջութակի համար Ռոստրոպովիչի կատարմամբ, ուղղակի մաս են կազմում շատ երաժիշտների մանկավարժական գործունեության ասպարեզում (շտրիխներ, ծայնի արտաբերում, մատների դասավորություն և այլն):

Որպես Բախի սյուիտների անգլոգական կատարողներ, մեզ՝ թավջութակահարներիս համար թանկ է երկու անուն կա՝ Պաբլո Կազալս և Մստիսլավ Ռոստրոպովիչ:

«Ես սիրում եմ նվագել սյուիտները իրար ետևից և այն բաժանել երկու երեկոյի միջև, - ասում է երաժիշտը. - որովհետև միայն այդպես կարելի է հասկանալ ցիկլի ամբողջականությունը»:

Շատ մեծ է Ռոստրոպովիչի դերը ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները պրոպագանդելու գործում. Ս. Պրոկոֆև, Դ. Շոստակովիչ, Բ. Բրիտտեն, Է. Էլզար, Տ. Խրեննիկով, Է. Սիրգոյան, Ա. Բաբաջանյան և այլոք:

Շատերի համար Ռոստրոպովիչը եղել է նրանց ստեղծագործությունների առաջին կատարողը (Բ. Բրիտտեն, Դ. Շոստակովիչ, Ս. Գուբայդուլինա, Ս. Պրոկոֆև):

Այն ներդրումը, որ ունեցել է Ռոստրոպովիչն արդի թավջութակի կատարողական արվեստի զարգացման գործում, ակներև է:

«Թավջութակի համար չկա որևէ անհասանելի բարձունք», - ասում է նա. «Այն պետք է երաժշտական միտք արտահայտի, ընդգծի, ամենավառն ու արժեքավորը, ունենա բարձր զեղարվեստական որակ»:

Կոնցերտմայստերը

Հարկ է նշել, որ նա միաժամանակ փայլուն տիրապետում էր դաշնամուրին: Դրա վառ ապացույցն է իր կնոջ՝ տաղանդավոր երգչուհի Գալինա Վիշնևսկայայի համերգներին նվագակցությունը: Շատ անգամ նվագակցում էր անգիր, առանց նոտաներին նայելու:

Վարպետության դասեր և դասավանդման մեթոդաբանությունը

Իր վարպետության դասերն անցկացնում էր դաշնամուրի մոտ:

Ուսանողներին օրինակներ էր բերում հատվածներ կվարտետներից, օպերաներից, սիմֆոնիաներից, որոնք կարող էին օգնել նրանց ավելի ցայտուն ընկալել տվյալ ստեղծագործությունը:

Չէր սիրում թավջութակով ցույց տալ հատվածը: Նրա կարծիքով, դա ավելորդ անվստահություն կմտցներ ուսանողի մեջ սեփական նվագի հանդեպ:

Կոնսերվատորիայի իր դասարանում ուսանողին արված ամենախիստ դիտողությունը՝ նրա երևակայության բացակայությունն էր:

Աշխատում էր մանրակրկիտ, յուրաքանչյուր հատվածին տալով հատուկ ուշադրություն դարձնելով:

Տարիներ հետո, դասավանդման մեթոդը զանազան փոփոխությունների էր ենթարկում, ելնելով իր սեփական փորձից:

Ժամանակի ընթացքում, օրինակ, նա եկավ այն եզրակացության, որ ուսանողը պետք է անցնի որքան հնարավոր է շատ թվով ստեղծագործություններ: Լինի դա տեքստի ընթերցում, մատների ճիշտ ընտրություն և այլն... Այդ ամենն անելուց հետո միայն, Ռոստրոպովիչն սկսում էր աշխատել տվյալ ստեղծագործության յուրաքանչյուր հատվածի վրա՝ շտրիխների՝ նրանց արտահայտչականության, ֆրագի զգացողության վրա, չի պարտադրում այն շտրիխները, որոնք դրված են եղել նախկինում, այլ առաջարկում է ուսանողներին գտնել իրենց անհատականը՝ նշելով, որ կարևոր է երաժշտությունը ճիշտ հասցնել ունկնդրին: Եղել են դեպքեր, երբ ուսանողի «գտած» շտրիխը իրեն շատ դուր է եկել և օգտագործել է այն:

«Առաջին հերթին ուսանողը պետք է հասկանա, թե որն է ստեղծագործական արտահայտչամիջոցը. ուժը»:

Պարտադրում էր մոտվի անցնել նվագախմբի պարտիտուրը (երբ ուսանողն աշխատում էր կոնցերտի վրա), զգալ մենակատարին շրջապատող գործիքների տեմբրը, տեսնել առանձին գործիքներին բնորոշ գույները: Այդ դեպքում միայն կարելի է հասնել երաժշտության կատարյալ մթնոլորտին, որն այդքան անհրաժեշտ է երաժիշտ կատարողին, մենակատարին:

Սովորեցնում էր յուրաքանչյուր պաուզային վերաբերվել շատ խնամքով, բացատրում նրա դերն ու նշանակությունը, ցեզուրան,

որոնք երբեմն ամենակարևոր տեղ են զբաղեցնում երաժշտության մեջ: Հաճախ ասում էր իր ուսանողներին. *«Սովորեք երաժշտության մեջ լսել լռությունը և կարողացեք այն հասցնել ունկնդրին»:*

Նրա մանկավարժական բնատուր տաղանդի անբաժան մասն էին կազմում աֆորիզմները, կերպարային բնորոշումները:

«Պետք է նվազես այնպես, որ զգաս վաղ լուսաբացը. զգաս ինչպես է բարձրանում արևի հրե գունդը»: (Դվորժակի կոնցերտի ֆինալի *meno-mosso*-ն) կամ ռիթմը այնքան առաձգական է, ինչպես գնդակը (Ս. Պրոկոֆևի Կոնցերտ - Սիմֆոնիայի 2-րդ մասը):

Երբեմն նրա համեմատությունները թվում էին պարադոքսալ, բայց միևնույն ժամանակ մտորելու տեղիք էին տալիս:

Պարապմունքների ականատեսը և ունկնդիրը

Ինձ բախտ է վիճակվել ներկա գտնվելու նրա դասարանում, նվազել: Տպավորությունս այնքան մեծ էր, այնքան հուզիչ: Ներկայացրեցի երկու պիես. Կ. Փոփերի «Էլֆերի պարը» և Ա. Դվորժակի «Մեղեդի»-ն: Լսեց ուշադիր, բավական զովեստի խոսքեր ասաց. (ես կոնսերվատորիայի 2-րդ կուրսում էի) արժեքավոր խորհուրդներ տվեց, որոնք մինչև այսօր ունկերումս են: Դասն անցնում էր պատմությունների, օրինակների, համեմատություններ անելու ձևով, որոնք այնքան տեղին էին, հուևորով լի, երբեմն էլ ծիծաղելի:

Ուսանողներից մեկի ելույթից հետո ասաց. *«Դու տեսնո՞ւմ ես այս լուսամփոփը: Կարծես նստած ես լուսամփոփի վրա և նվագում ես: Բայց ո՞ւմ համար. երևի ոչ-որք»:* Մենք տարակուսանքով իրար նայեցինք (դասարանում բավականին թվով ուսանողներ կային):

Հետո շատ էր հիշում այդ արտահայտությունը: Կատարողը պետք է սիրով նվագի և սիրով ներկայացնի իր ունկնդրին: Միայն այդ դեպքում նա կգոհացնի իր հանդիսատեսին:

Չպետք է բավարարվել ձեռք բերածով և միշտ հիշել. կա լավից-լավը և ձգտել այդ լավին:

Տարիներ առաջ Երևանում Ռոստրոպովիչը հանդես եկավ իր համերգաշարով:

Համերգները ֆիլհարմոնիայի փոքր և մեծ դահլիճներում էին:

Փոքր դահլիճում նա ներկայացնում էր տարբեր կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունները Բեթհովենի, Շուբերտի, Բրամսի և այլոց սոնատները, բազմաթիվ փոքր կտավի գործեր:

Այնքան բազմաբնույթ, այնքան բազմազան, որ կարծես յուրօրինակ աստղաթափ լինե՞ր՝ տրամադրությունների անընդհատ փոփոխմամբ: Բենը բավականին մոտ լինելով ունկնդրին, կարծես ստեղծում էր օդեղեն կամուրջ իր և կատարողի միջև: Դա մի մտերմիկ զրույց էր, լի ամենատարբեր էնոցիոնալ երանգներով:

Կամերային համերգին հաջորդում էր սիմֆոնիկ համերգը: Նույն օրը, կարճ դադարից հետո, ֆիլհարոմիայի արդեն Մեծ դահլիճում կայանում էր երկրորդ համերգը, արդեն ներկայացնելով կոնցերտներ սիմֆոնիկ նվագախմբի հետ (Ռ. Շոնման, Ա. Դվորժակ, Է. Էլզար, Ս. Պրոկոֆև և այլն): Եվ այսպես՝ յոթ երեկո: Դա մի յուրատեսակ տոն էր մեզ՝ ուսանողներիս և հայ երաժշտասերների համար: Այդքան ուժ, այդքան կորով, այդքան հուզառատ և անասելի կատարողական բարձր մակարդակ կարող է ունենալ միայն Ռոստրոպովիչի նման անհատը:

Մ. Ռոստրոպովիչ դիրիժորը

Հարկ է նշել Մատիսլավ Մ. Ռոստրոպովիչ դիրիժորին: Մոսկվայի Մեծ թատրոնում բեմադրած «Եվգենի Օնեգին»-ն ունեցավ շոշոմ դալի հաջողություն: Տատյանայի դերում հանդես էր գալիս Գալինա Վիշնևսկայան: Դրան հաջորդեցին Ս. Պրոկոֆևի «Սեմյոն Կոտկոն», «Պատերազմ և խաղաղություն», Պ. Չայկովսկու «Պիկովայա դամա», «Մազեպա» և ուրիշ օպերաներ թե՛ ռուսական բեմում, թե՛ արտասահմանյան շատ բեմերում (78 օպերա):

Եվ ամենուրեք անշլագ, հոտնկայա ծափահարություններ, հիացմունքի խոսքեր:

Հիշենք նաև այն հիանալի վոկալ-երաժշտական ցիկլերը Գալինա Վիշնևսկայայի հետ, որտեղ Մ. Ռոստրոպովիչը կնոջը նվագակցում էր, որպես դաշնակահար:

Երկար տարիներ Մ. Ռոստրոպովիչը ղեկավարել է Վաշինգտոնի սիմֆոնիկ նվագախումբը, կազմակերպել է Դ. Շոստակովիչի անվան փառատոն Սանկտ-Պետերբուրգում, Լոնդոնում:

1977 թվականից չորս տարին մեկ կայանում է Մ. Ռոստրոպովիչի անվան թավջութակահար-կատարողների մրցույթը:

Իր ծննդյան 78-րդ տարեդարձին, որը նա անվանեց «վերջին պրեմիերա», նվագեց Ա. Դվորժակի հանրահայտ կոնցերտը Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի հետ:

Վերջաբան

Նա կարծես ապրում էր ոչ թե երկրային, այլ երկնային կյանքով, փորձելով հասցնել այն ամենը, ինչ մտադրվել էր: Ապրում էր, ֆիզիկապես և հոգեպես նվիրվելով Մեծն Արվեստին՝ Երաժշտությանը:

Մի անգամ նրան հարցրեցին. «Ի՞նչ կդառնայիք, երբ երկրորդ անգամ ծնվեիք» - միանգամից պատասխանեց. «Իհարկե թավջութակահար»:

Լինելով համամարդկային արժեք ներկայացնող անհատ, նա չէր կարող լինել մեկ երկրի քաղաքացի: Ռոստրոպովիչին գնահատում էր ողջ աշխարհը՝ տալով իր մրցանակները, մեդալները, տարբեր երկրների երաժշտական ակադեմիաների պատվավոր դոկտորի տիտղոսները, պետական մրցանակները, որոնք կարելի է երկար թվարկել...

Մստիսլավ Ռոստրոպովիչ՝ մեծ արվեստագետը, հումանիստը, կատարողը և դիրիժորը համարվում է համաշխարհային երաժշտական կատարողական արվեստի կարկառուն դեմքերից մեկը, որն իր անմնացորդ և անգնահատելի ներդրումն ունի արդի թավջութակի կատարողական արվեստի զարգացման հարցում: «Կյանքի և մահվան միջև չկա ոչինչ, բացի երաժշտությունից»:

Մստիսլավ Ռոստրոպովիչ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Гайдарович Т., Мстислав Ростропович, Москва, 1969.*
Gaidamovich T. A., Mstislav Rostropovich, Moscow, 1969.

REFERENCES

1. *Gaydamovich T. A., Mstislav Rostropovich, Moskva, 1969.*

Հեղինակի մասին. տես էջ 16:

Об авторе, см. С. 16.

About the author, go to P. 16.

ЗАРУИ АРМЕНОВНА ХАЧАТРЯН

*Պիանիստկա, կոնցերտмейстер и педагог кафедры
контцертмейстерской подготовки Ереванской
государственной консерватории им. Комитаса*

E-mail: zara.khachatryan75@gmail.com

Doi:10.58580/29538041-2022.12-25

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ա. Ս. Կոստյանցի
և լարային գործիքների մասնագիտական ամբիոնի կողմից՝
(3.4.2023 թ.): Գրախոսների՝ (20.4.2023 թ.) և (19.05.2023 թ.)
հեղինակը ներկայացրել է հրատարակության (27.4.2023 թ.):

ОСОБЕННОСТИ РАБОТЫ КОНЦЕРТМЕЙСТЕРА В ДМШ И ДШИ

Абстракт

Мастерство концертмейстера требует от пианиста не только огромного артистизма, но и разносторонних музыкально-исполнительских дарований, знаний и особенностей игры на инструментах. Деятельность концертмейстера требует от пианиста применения многосторонних знаний и умений по курсам гармонии, сольфеджио, полифонии, истории музыки анализа музыкальных произведений, вокальной и хоровой литературы, педагогики — в их взаимосвязях. Цель данной статьи — указать на специфические особенности работы концертмейстера в классах ДМШ и ДШИ.

Ключевые слова: концертмейстер, транспонирование, солист, чтение с листа, сцена, концерт.

Ամփոփում

Դաշնակահարուհի, կոնցերտմայստեր և ԵՊԿ կոնցերտմայստերության ամբիոնի դասախոս **Զարուհի Արմենի Խաչատրյան**. - «Մանկական երաժշտական և Արվեստի երաժշտական դպրոցներում կոնցերտմայստերի աշխատանքի առանձնահատկությունները»:

Կոնցերտմայստերի վարպետությունը դաշնակահարից պահանջում է ոչ միայն արտիստիզմ, այլև երաժշտական և կատարողական բազմակողմանի ունակություններ, գործիքներով նվագելու գիտելիքներ և առանձնահատկություններ: Կոնցերտմայստերի գործունեությունը դաշնակահարից պահանջում է բազմակողմանի գիտելիքներ և ունակություններ հարմոնիայի, սոլֆեջոյի, պո-

լիֆոնիայի, երաժշտության պատմության, երաժշտական ստեղծագործությունների վերլուծության, երգեցողության և երգչախմբային գրականության, մանկավարժության դասընթացների կուրսերում՝ դրանց փոխկապակցման մեջ: Այս հոդվածի նպատակն է ընդգծել ՄԵԴ և ՄԱԴ-ների տարբեր դասա-րաններում կոնցերտմայստերի աշխատանքի առանձնահատկությունները:

Բանալի քառեր. կոնցերտմայստեր, տրանսպոզիցիա, մենակատար, թերթից ընթերցում, բեն, համերգային գործունեություն:

Abstrakt

Pianist, concertmaster and teacher at the Department of Concertmaster Training at YSC Zaruhi Armen Khachatryan. - "Peculiarities of the Concertmaster's work at Children's Music School and Children's Art School". Mastery of a concertmaster requires not only great artistry on the part of a pianist, but also diverse musical and performing talents, knowledge and peculiarities of playing instruments. The activity of a concertmaster requires the pianist to apply multifaceted knowledge and skills in the courses in harmony, solfeggio, polyphony, history of music, analysis of musical works, vocal and choral literature, pedagogy - in their interrelationships. The present article aims at highlighting the specific features of the concertmaster's work in the classes at Children's Music School and Children's Art School.

Key words: concertmaster, transposition, soloist, score reading, scene, concert.

Введение

Перед концертмейстером детских музыкальных школ и школ искусств поставлен ряд задач: концертмейстер одновременно является и аккомпаниатором, и помощником преподавателя, и ансамблистом. В чем же состоят особенности деятельности этого специалиста и суть многообразия видов деятельности в процессе работы?

Обратившись к музыкальным энциклопедиям, читаем: “Концертмейстер (нем. *koncertmeister*, англ. *Leader*, франц. *violon solo*):

1. Первый скрипач оркестра, иногда заменяет дирижера. В обязанности концертмейстера входит проверка правильности настройки всех инструментов оркестра. В струнных ансамблях концертмейстер является обычно художественным и музыкальным руководителем.

2. Музыкант, возглавляющий каждую группу струнных инструментов оперного или симфонического оркестра.

3. Пианист, помогающий исполнителям (певцам, инструменталистам, артистам балета) разучивать партии и аккомпанирующий им в концертах. В средних и высших музыкальных учебных заведениях есть концертмейстерские классы, в которых студенты обучаются искусству аккомпанемента и после сдачи экзамена получают “квалификацию концертмейстера” (1. С. 929-930).

Концертмейстеры в детских музыкальных школах

Концертмейстеры в детских музыкальных школах работают в оркестровых классах и классах народных инструментов, в хоровых классах и классах хореографии, сольного пения, дирижирования, театрального искусства. Они исполняют аккомпанирующую партию в произведениях, написанных в сопровождении фортепиано или выполняют роль аккомпанирующего инструмента, часто заменяющего оркестр.

Мастерство концертмейстера глубоко специфично. Оно требует от пианиста не только огромного артистизма, но и разносторонних музыкально-исполнительских дарований, знаний и особенностей игры на инструментах в тех классах, где они работают, знание специфики работы на хоровых, хореографических и других отделениях.

Опыт показывает, что главной отличительной чертой концертмейстерской деятельности является необходимость развития навыков и умений слушать не только себя, но и солиста. Именно в двойной концентрации и активности слухового внимания пианиста скрыта главная черта концертмейстерской деятельности.

“Умение быстро ориентироваться в тексте — один из самых главных навыков работы концертмейстера. Это формирует и ряд других качеств, при которых охват концертмейстером музыкального произведения будет как бы опережать намерения солиста, тогда он станет по-настоящему удобным партнером” (2. С. 14).

Именно на это качество указывал И. Гофман: «... старайтесь <... > все время предугадывать намерения вашего солиста, ибо такое предугадывание и составляет душу аккомпанемента» (3. С. 77).

Работа концертмейстера требует постоянных занятий за инс-

трументом, изучения и освоения концертного и учебного репертуара. Такая работа расширяет творческий кругозор музыканта, формирует и совершенствует его артистизм, позволяет быть активным пропагандистом музыки. При всем разнообразии и определенных особенностях работы в разных классах и на различных отделениях, можно попытаться сформулировать ряд общих специфических черт в работе концертмейстеров детских школ искусств и детских музыкальных школ.

Одной из таких важных особенностей является умение и готовность быть «вторым». Отсутствие этого качества становится особенно заметным во время публичных выступлений, так как пытаясь выделиться можно заглушить, “забить” солиста, нарушить ансамбль и не иметь возможности этот ансамбль ощущать. Все должно подчиняться замыслу композитора, солиста или руководителя коллектива, важно чувствовать меру, осторожно сохраняя звуковой баланс.

Концертмейстер должен неотступно следить за учеником, даже если тот путает текст, не выдерживает паузу или удлинняет ее. Если ученик теряет интонацию на короткое время, можно резким выделением аккомпанемента вернуть в высотное положение. Если потеря интонации наблюдается на длительном участке, следует по звуку снять всю фактуру, кроме баса, вплоть до нового эпизода. Если произошла остановка исполнения и музыкальная подсказка не помогает, следует спокойно условиться с учеником, с какого эпизода возобновлять игру.

Умение слиться с намерениями своего солиста и естественно, органично войти в концепцию произведения — основное условие совместного музицирования. В процессе исполнения слуховое внимание пианиста проходит ряд характерных этапов развития и формирования. А именно: первый этап непосредственно связан с вслушиванием и осознанием собственной партии, которую пианисту необходимо прочно выучить и свободно, уверенно исполнять; второй этап — обусловлен с восприятием партии солиста, которую пианист также внимательно разучивает, подпевая себе во время исполнения; третий этап — самый сложный, в нем проис-

ходит слуховая адаптация, постепенное слияние обеих партий в ансамбль и, наконец, четвертый этап — заключительный, кульминационный, когда в слуховом сознании пианиста обе партии (сопровождающая и солирующая) соединяются в единый звуковой поток, в котором уже не воспринимаются две партии, а слышится единый ансамбль.

Все перечисленные этапы очень значимы и взаимосвязаны, так как нарушение их последовательности или недостаточная работа над тем или иным этапом может стать причиной отсутствия исполнительского ансамбля и неудачного исполнения. И, наоборот, достижение такого исполнительского ансамбля является ярким свидетельством концертмейстерского мастерства пианиста. Часто партию сопровождения рассматривают как исполнение второго плана, как подчиненную солирующему инструменту. Такая постановка не верна и не всегда обоснованна, так как, во-первых, партия сопровождения даже если она и является гармоническим фоном для ведущего голоса, то в любом случае от качества ее звучания зависит общий успех исполнения, а во-вторых, во многих произведениях композиторы фортепианную партию по роли и значимости уравнивают с солирующей.

Требование

Современный пианист, посвятивший себя подобной деятельности, является одновременно и ведущим, и ведомым, и педагогом-наставником, и покорным исполнителем воли своего солиста, а в целом — его другом и соратником (2. С. 11). Для того, чтобы концертмейстер мог быть удобным партнером, для того, чтобы он мог быть настоящим помощником солиста, он должен владеть искусством быстрой ориентации в нотном тексте. Это одно из обстоятельств, которые роднят функции концертмейстера и дирижера. Аккомпаниатору необходим музыкантский охват, видение всего произведения: формы, партитуры, состоящей из трех строчек; это и отличает концертмейстера от пианиста-солиста. В этом и состоит специфика его профессии (2. С.12).

Другое, не менее важное требование - точнейшее следование тексту. Динамика и агогика, как и сам текст, должны быть соблю-

дены самым точнейшим образом. Недопустимо в текстах, особенно классиков, написанных именно для фортепиано, переделывать оттенки, мелизмы и прочее.

При исполнении часто возникает партии аккомпанеента другая сложность, когда данная партия сочинялась не для фортепиано, с учетом особенностей инструмента (удобства фактуры, регистровой красочности, ясных задач педализации и т.д.), а является переложением, то есть одним из вариантов воплощения на фортепиано музыки, первоначально написанной для оркестра. Огромное количество таких примеров мы наблюдаем в работе концертмейстера в классах хореографии.

Надо отметить, что большинство композиторов считало фортепиано единственным инструментом, способным воспроизвести сущность оркестровой партитуры, и в данных случаях партия фортепиано представляет собой не что иное, как приспособление красочного, масштабного, многоголосного звучания симфонического оркестра к возможностям одного инструмента — фортепиано.

Композиторы, создававшие превосходные оркестровые партитуры, в работе над клавиром зачастую не учитывали технических неудобств пианиста, перенасыщая фортепианную фактуру значительными сложностями, затрудняющими естественное исполнение фортепианной партии.

Концертмейстеру часто приходится упрощать эту фактуру, добиваясь более рационального способа изложения.

При работе в классе концертмейстер может произвольно изменить и облегчить трудные места, чтобы не останавливать движение музыки. В процессе разучивания произведения с хором или солистами пианист может применить метод вычленения сольной партии или хоровой партитуры, сводя фортепианную партию к основным гармоническим и ритмическим функциям. Сделать это не так просто, как может показаться на первый взгляд, и предполагает наличие у концертмейстера хорошо развитого гармонического слуха и комплексного музыкального мышления. Исполняя же эти произведения в концертном зале, концертмейстеры долж-

листа; ансамблевое внимание следит за воплощением единства художественного замысла. Такое напряжение внимания требует огромной затраты физических и душевных сил.

Необходимые качества концертмейстера

Воля и самообладание — качества, также необходимые концертмейстеру. При возникновении каких-либо музыкальных неполадок, происходящих на эстраде, он должен твердо помнить, что ни останавливаться, ни поправлять свои ошибки недопустимо, как и выражать свою досаду на ошибку мимикой или жестом.

Можно сделать вывод, что концертмейстер должен иметь комплекс профессиональных качеств, составляющими которого являются:

кестра и “Вокализ в форме хабанеры”. “Испанская рапсодия”, состоящая из 4 частей: “Прелюдия ночи”, “Малагенья”, “Хабанера” и “Ферия” является первым примером симфонического произведения (у Равеля), изумляя виртуозностью оркестрового письма. Далее была создана одна из самых интересных одно-актных опер “Испанский час (по комедии М.Франк-Нозна)”. “То, что я попытался сделать, довольно смело: я хотел возродить итальянскую оперу-буфф, вернее, только ее принципы. Мое произведение задумано не в традиционной форме, как и его единственный прообраз — “Женитьба” Мусоргского, точно воспроизводящая комедию Гоголя. “Испанский час” — это музыкальная комедия. В текст Франк-Нозна не внесено никаких изменений, за исключением нескольких купюр. Только финальный квинтет по своему построению, фиоритурам и вокальным эффектам несколько напоминает обычные оперные ансамбли. За исключением этого квинтета, все остальное скорее речевая декламация, чем пение. Французскому языку, как и всякому другому, присущи свои выразительные особенности, музыкальные интонации. Я не вижу основания, почему бы не использовать эти его качества и не попытаться точно передать их. Дух этого произведения откровенно юмористический. Я хотел передать иронию именно музыкой, гармонией, ритмом, оркестровкой, а не так, как в оперетте, путем произвольного нагромождения смешных слов” (З. С. 59-60).

“Испанский час” начинается вступлением, описывающим лавку часовщика: дисгармония звона, тиканья, все часы бьют в разное время. Каждая деталь Прелюдии вносит свою лепту в звуковую картину: засурдиненные трели у струнных, перезвон колокольчиков, трели ксилофона и т.д. Двое персонажей появляются на сцене - хозяин лавки Торквемада и погонщик мулов Рамиро, принесший на починку свои часы. Но Торквемада должен идти проверять часы муниципалитета (“Официальный час не ждет”). При появлении Гонсальве его партия накладывается на слова

Рамиро и изобилует каденциями, пассажами, сам персонаж восхищается собственным пением.

Пример № 2 “Испанский час”
For example: № 2. "A Spanish Hour"
Օրինակ N 2. «Իսպանական ժամ»



Весьма юмористична напыщенно-важная тема, характеризующая дону Иньиго. Она напоминает тему павлина из “Естественных историй”.

Пример № 3. “Испанский час” Тема дона Иньиго
For example: № 3. A Spanish Hour" Don Inigo's Theme
Օրինակ N 3. «Իսպանական ժամ» դոն Ինիգոյի թեման



Сменяют друг друга “вялые” мелодии Гонсальве и полные огня реплики Консепсьон. Она же прекрасно изображает свои опасения звукоизобразительными возможностями голоса.

Пример № 4. “Испанский час”, реплики Консепсьон
For example: № 4. "A Spanish Hour", Concepcion's remarks
Օրինակ N 4. «Իսպանական ժամ», Կոնսեպսյոնի ռեպլիկները



В четвертой сцене очень выразительна ее партия: сначала широкими кантиленными фразами Консепсьон вторит Гонсальве, затем, почувствовав потерю времени, ее вокальная речь резко

Пример № 5. “Испанский час”
For example: № 5. "A Spanish Hour"
Օրինակ N 5. «Իսպանական ժամ»



меняется, накладываясь на мотив часов. Запутанные ситуации не решаются, и Консепсьон находит утешение в объятиях Ра-

миро. Завершается опера квинтетом, близким к традиционным оперным жанрам. Став крупнейшим достижением Равеля и являясь новым музыкально-сценическим жанром, опера обогатила наследие композитора, насытив интонационными оборотами, ладами, ритмом, гармонической палитрой, присущей испанской музыке.

В 1911 году “Испански час” впервые был поставлен на сцене “Опера-комик”.

В 1908 году был создан один из шедевров Равеля — “Ночной Гаспар” — три поэмы для фортепиано по тексту А. Бертрана. Это произведение занимает исключительное положение во французских фортепианных сочинениях, являясь поэмой с развернутой литературной программой. Параллельно с “Ночным Гаспаром” Равель работал над “Матушкой Гусыней” — пятью детскими пьесами для фортепиано в четыре руки, простыми по фактуре, утонченными и выразительными. Оба произведения диаметрально противоположны друг другу и литературно-музыкальными образами, и исполнительскими задачами, в то же время являясь шедеврами музыкальной мировой литературы.

В 1909-1912 годах Равелем были созданы “Благородные и сентиментальные вальсы”, вокальные поэмы на тексты Малларме, и, конечно, балет “Дафнис и Хлоя”. Именно он, являясь одним из значительнейших произведений предвоенного периода, завершает собой огромный пласт импрессионизма в творчестве Равеля. Очень интересна увлеченность композитора камерно-инструментальным письмом, подчеркнутым рельефностью линий фактуры, их “упрощенностью”, введением в состав голоса как участника ансамбля. Эти особенности предвосхищают “рождение” Мадагаскарских песен” (1925). Благодаря этой увлеченности, Равель создал Три поэмы на слова С.Малларме: “Вздых”, “Ничтожная просьба”, “На крупе скакуна лихого”, “украшая” их удивительным инструментальным составом: струнный квартет, фортепиано, две

флейты и два кларнета. Первая поэма – “Вздых”- рисует осенний пейзаж в период увядания, плеск струй фонтана. Именно их озвучивают струнные (глиссандо), зависящие от фортепианных “звуковых” пятен. Этой фактуре противостоит прекрасно очертанная мелодия голоса.

Пример № 6. “Вздых”
For example: № 6. "A Sigh"
Օրինակ N 6. «Հառաչանք»

Lent $\text{♩} = 40$

1 Viol
 2 Viol
 Alto
 Cello
 Chant
 Piano

Mon à me vers ton front

В середине поэмы становясь хроматически более подвижным, в конце возвращается первоначальный образ “прозрачного” фонтана. Во второй поэме - “Тщетная мольба” – пользуясь диатоническим письмом, Равель использует возможности голоса, трактованного в инструментальной манере. В самом начале, лишенные гармонического базиса и воспринимаясь линейно, далее по ходу произведения инструменты получают ясную гармоническую основу.

Пример № 7. “Тщетная мольба”
For example: № 7. “An Epic Song”
Օրինակ N 7. «Զուր Աղերիանք»

Très lent



The musical score is for a piece titled "An Epic Song" (Օրինակ N 7. «Զուր Աղերիանք»). It is marked "Très lent". The score includes parts for Grand Flute (Gr. Fl.), Violins (1 Viol., 2 Viol.), Alto, Cello (Vclle), Chant (Vocal), and Piano. The key signature has two flats (B-flat and E-flat), and the time signature is 12/8. The score is divided into two measures. The first measure features a Grand Flute part with a trill, Violins and Alto playing tremolos (pp), and Cello playing a sustained note (pp). The vocal part (Chant) enters in the second measure with the lyrics "Prin.ces - se, nom.mez nous ber.ger" and is accompanied by the Piano (p). The vocal line is marked "expressif".

Третья поэма - “На крупе скакуна лихого”- наиболее сложна по гармонии, фактуре и образному содержанию. Начало открывают флейты и скрипичные тремоло, дальше интонации флейты варьирует голос, сопровождающийся аккордами трезвучий. Доведя до гармонического усложнения всего комплекса, Равель разводит его, пользуясь линейностью и заканчивает аккордом “до” с тонической функцией.

В военный период Равель создает Трио (для фортепиано, скрипки и виолончели), Три песни на собственные тексты, фортепианную сюиту “Памяти Куперена”. Три песни образуют свое-

образный триптих, оттеняя настроения друг друга. Первая песня - “Николетта” — шутливый рассказ о чувствах красавицы к богатому старику, которые оборачиваются в едкую сатиру. Вторая песня - “Три прекрасные птицы рая” — одно из чудесных эпических и печальных произведений, выражающих горечь утраты, в то же время — теплоту и сердечность. Третья песня — “Не ходите в лес Ормонды” — рондо по форме, скерцозная, полная веселья и задора зарисовка. Ранее эти песни были написаны в виде хоров *a cappella*, а впоследствии переложены для голоса с фортепиано.

В послевоенное время множество идей в литературе, музыке, философии, трансформируя и реализуя эстетику, развивались по собственным траекториям. Равель еще до войны шел к воплощению “национального” классицизма. Начиная с Сонаты для скрипки и виолончели (1922) мелодическая линия преобрела ведущее значение, нередко композитор обращался к джазу в Сонате для скрипки и фортепиано (1923-1927) и к стилю мюзик-холла в опере “Дитя и волшебство”(1925), но одним из первых “послевоенных” произведений является Вальс. Заканчивая его оркестровку в 1920 году, Равель подчеркивает обращение к “хореографической поэме”, отражая трагичность и смятение времени.

В 1924 году была написана скрипичная рапсодия “Цыганка”, поражающая традиционностью облика и цыгано-венгерским тематизмом (отголоски фольклора). В том же году было создано небольшое вокальное сочинение “Ронсар - своей душе” к 400-летию со дня рождения поэта П.Ронсара. Лаконизм в этом произведении доведен до предела. Интересно то, что в следующем году Равель пишет совершенно другое по стилю произведение — оперу-балет “Дитя и волшебство”, называя его “лирической фантазией в двух актах в духе американской оперетты”. Опера представляет собой дивертисмент из многих танцевальных и во-

кальных номеров: модернизированный менуэт, размеренный марш, таити-трот. Последние два номера первого акта, состоящие из отдельных жанрово-характерных эпизодов, связаны друг с другом лишь сюжетно. Второй акт тоже состоит из отдельных жанровых и танцевально-ритмических номеров. Музыкальный язык оперы, при всем разнообразии, обладает единством стиля: “Отказ от прелести гармонического языка, все большая реакция в сторону мелодии” (3. С. 224). В каком-то аспекте переход к неоклассицизму присущ не только музыке Равеля, но и европейскому музыкальному течению в целом.

В 1925 году были созданы “Мадагаскарские песни” по написанным Э.Парни “Мадагаскарским элегиям”. Состав создан для квартета: вокальная, флейтовая, виолончельная и фортепианная партии. Цикл состоит из трех песен. Первая — “Прекрасная Нахандова” - поэма о любовной страсти — начинается с дуэта виолончели и голоса. При приемлемой неизменности звукоряда меняется роль ритма. Во время первой кульминации вступает весь квартет с независимыми партиями и тематической обособленностью. Постепенно подчеркнуто-линейные течения получают гармоническую основу. Этот импрессионистический отголосок — вторая кульминация песни. Голос постепенно выходит из неизменного повторения, но к концу, в другой инструментовке, как и остальные участники, всем составом возвращаются к началу песни, растворяясь в фигурациях, заканчивая произведение флейтовой и фортепианной партиями. Вторая песня — “Ауа”- напоминает балладу с повествовательно-драматическим характером. Начинается воинственным кличем голоса, соединяющимся с мотивом флейты, пиццикато виолончели и партией фортепиано. Сдержанно интонируя фразы в пределах узкого диапазона, партия голоса перекладывает огромный пласт напряжения на роль флейты. Равель, пользуясь политональным

расслоением фактуры, достигает эмансипации звуковых линий — тональной независимости.

Пример № 8. “Aya”
For example: № 8. “Aua”
Օրինակ N 8. «Այա»

Andante ♩ = 60

Flauto

Violoncello

Canção

Piano

Далее сдержанная мелодика голоса приобретает прерывистый скачкообразный характер. Возглас “Ауа”, звучащий на полтона выше в сложнейшем обрамлении, приводит к развитию комплекса нескольких тональностей, и только партия виолончели раскрывает аккорд, к которому и тяготеют все тональности. Заканчивается песня отголосками клича, битвы и скорбной интонации рассказа. В третьей песне — “Хорошо улечься в зной” — пассажи солитрующей флейты “описывают” теплый вечерний воздух. Флажолеты виолончели и большие септимы у фортепиано создают иллюзию звуковых бликов. Голос вторит флейте, оба участника постепенно заполняют фактуру, но в повторах она исчерпывается и ослабляется статикой импрессионистической трактовки терцдецимаккорда (от ля).

Пример № 9. “Хорошо улежся в зной”
For example: № 9. “Good to Lie down in the Heat”
Օրինակ N 9. «Լալ է նիհրել շոգին»

Andante (♩ = 66)

Piccolo

Violoncello

Canto

Piano

Que vos pas

fin. al segno

Этот аккорд выступил как сумма линейно независимых голосов. Заканчивается песня тонической квинтой у фортепиано и “нормативным” Ре-бемоль мажором у певца. “*Это своего рода квартет, в котором голос играет роль главного инструмента. Все партии независимы друг от друга*”, - писал композитор о стиле этих пьес (З.С.230).

Конец 1920-х- начало 30-х годов были творчески счастливыми годами для Равеля: шедеврами, созданными в этот период, стали “Болеро”, два фортепианных концерта (Концерт соль мажор и Концерт для левой руки) и “Три песни Дон Кихота Дульсинея”, на последнем и остановимся.

В 1932 году одна из кинофирм объявила конкурс на сочинение музыки к фильму “Дон Кихот” с Шаляпиным в главной роли. Фильм, конечно, не был снят, но Равель написал три песни на слова П.Морана: Романтическую, Эпическую и Застольную.

Все они отличаются танцевальными ритмами, тональными центрами, обогащая доминантные лады специфическими фригийскими оборотами. “Романтическая песня” написана в духе серенады. В ней используется гитарный аккомпанемент, меняется ритм (6/8 на 3/4) гуайары. В мелодии напевность сочетается с декламационностью. Выразительно звучит мелодический оборот: подъем с тоники на терцию и постепенный спуск на квинту, обрисовывающих фригийский тетрахорд лада от “фа” к “си-бемоль минору основной тональности. “Эпическая песня” — молитва. Мелодию псалма поддерживают параллельные квартсекстаккордные движения.

Пример № 10. “Эпическая песня”
For example: № 10. “A Feast Song”
Օրինակ N 10. «Դիւցազնեղաշին երգ»



Ритмический центр - сортсико (5/4), середину песни сопровождают трезвучия, а к концу меняется фактура, отступая от параллелизмов, здесь же используется фригийский звукоряд (от “до”) и гармонизация трезвучий фа мажор, чередующихся с квартсекстаккордами. Характер “Застольной песни” мужественный, вокальная партия сопровождается аккордами гитарного склада.

Пример № 11. “Застольная песня”
For example: № 11. “Praying in Vain”
 Օրինակ N 11. «Խնջույքի երգ»

29 Allegro (♩ = 184)

Foin du bâ - tard, il - lus - tre Da - me,

Qui pour me perdre à vos doux yeux

Используется ритмическая картина хоты (3/4).

Здесь же присутствуют два элемента: мелодический запев, переходящий в каденцию (с фригийским оборотом) и декламационные восторженные возгласы. “Три песни Дон Кихота Дульсинея” являются последним произведением, созданным мастером.

Заключение

После длительной и тяжелой болезни 19 декабря 1937 года скончался великий композитор Морис Равель. “Я не являюсь композитором-“модернистом” в собственном смысле этого слова, ибо моя музыка, далекая от бунтарства, скорее отмечена эволюционным развитием. Я всегда был убежден в том, что композитор

должен доверять бумеге лишь то, что он чувствует... Великая музыка, я убежден в этом, всегда идет от сердца. Музыка, я настаиваю на этом, несмотря ни на что, должна быть прекрасной” (4. С. 98).

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. *Цыпин Г. М.*, Морис Равель., М.: Госмузиздательство., 1959.
2. *Кремлев Ю.*, Клод Дебюсси., М.: Музыка., 1965.
3. /Равель в зеркале своих писем. Сост. Р. Шалю, Ж. Марсель., 2-е изд., Л.: Музыка, 1988.
4. *Шнеерсон Г.*, Французская музыка XX века., М., 1970.
Tsypin G. M., Maurice Ravel., M.: Gosmuz Publishing House, 1959.
Kremlev Yu., Claude Debussy, M: Musica, 1965.
/Ravel in the Mirror of His Letters. Compiled by R. Chalu, J. Marcel., 2nd ed., L.: Музыка, 1988.
Schneerson G., The French Music of the Twentieth Century, M., 1970.

REFERENCES

1. *Tsypin G.M.*, Moris Ravel', Gosmuzizdatel'stvo., 1959.
2. *Kremlev Yu.*, Klod Debussi., M.: Muzyka., 1965.
3. /Ravel' v zerkale svoikh pisem. Sost. R. Shalu, J. Marsel',., 2-e izd., L.: Muzyka, 1988.
4. *Shneerson G.*, Frantzuzskaya muzyka XX veka., M., 1970.

Об авторе: *ИРИНА ГЕКТОРОВНА ГРИГОРЯН* (род. 21 сентября 1974, г. Ереван). В 1992 году окончила среднюю специальную музыкальную школу им. П. И. Чайковского (класс проф. Л. Е. Григорян), в 1997 году - Ереванскую государственную консерваторию им. Комитаса (класс проф. Ю. Г. Аракеляна), в 1999 году - аспирантуру (класс проф. Н. А. Геворкян) по специальности “Солист-исполнитель”. С 2002 года преподает в Ереванской государственной консерватории им. Комитаса на кафедре концертмейстерского искусства в качестве педагога, доцент (2021). Опубликованные статьи: “Благородная и обаятельная (о Елене Анушавановне Тер-Гевондян)., //Музыкальная Армения., N. 1 (24) 2007 г., С. 41-43; “О музыкальном языке и некоторых особенностях исполнения романсов Микаэла Таривердиева”, //Музыкальная Армения., N. 1 (54) 2018 г., С. 51-56; “Первые концертмейстеры Советской Армении”.,

/Диалог культур., Гюмри, 2018., С. 236-245; “Некоторые особенности исполнения романсов М.И.Глинки” //Сборник статей преп. ЕГК #10 2019; “Камерно-вокальное творчество К.Дебюсси: некоторые аспекты исполнения” //Сборник статей преп. ЕГК #11 2021.

Հեղինակի մասին. ԻՐԻՆԱ ՀԵԿՏՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ծ. 21.09.1974 թ. թ. Երևան): Ավարտել է՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դաշնամուրային (1997 թ., պրոֆ. Յ. Հ. Առաքելյան) բաժինը և ասպիրանտուրան՝ (1999 թ., պրոֆ.՝ Ն. Ա. Գևորգյան): Աշխատում է՝ 2002-ից ԵՊԿ-ի կոնցերտմայստրության ամբիոնում, 2021-ից ղեկնւո: Հեղինակ է՝ նուսային ուսումնամեթոդական ձեռնարկի՝ նաև հոդվածների՝ «Ազնվատոհմիկ և հմայիչ. Հ. Տեր -Ղևոնդյանի մասին», //Երաժշտական Հայաստան #1 (24) 2007 թ., էջ 41-43, «Տարիվերդիևի մի քանի ռոմանսների երաժշտական լեզվի և կատարողականության յուրահատկությունների մասին», //Երաժշտական Հայաստան #1 (54) 2018 թ., էջ 51-56, «Սովետական Հայաստանի առաջին կոնցերտմայստրները» /Մշակութային երկխոսություն, Գյումրի, 2018, էջ 236-245, «Միխայիլ Իվանի Գլինկայի ռոմանսների կատարողական որոշ առանձնահատկություններ», //Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու Պրակ 10/2019 թ., Կ. Դերյուսիի վոկալ-կամերային ստեղծագործությունները և նրանց կատարման որոշ ասպեկտները, //Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու Պրակ 11/2021 թ.:

About the author: IRINA HECTOR GRIGORYAN (born 27.09. 1974) graduated from Secondary Music School of Piano after P. Tchaikovsky (1992, class of L. E. Grigoryan), YSC piano department (1997, class of Yu. G. Arakelyan) and post-graduate studies in 1999 (class of N. A. Ghevondyan) as a solo pianist. She has been working as a pedagogue at YSC in the Department of Accompaniment since 2002. She is an author of published articles about Noble and Charming H. Ter-Ghevondyan, //Musical Armenia #1 (24) 2007, P. 41-43; "About musical language and features of performance of some romances of Tariverdiev", //Musical Armenia #1 (54) 2018., P. 236-245; The First Accompanists of Soviet Armenia., /Gialogue of cultures., Gyumri, 2018., P. 236-245. "Some Performance Features of Mikhail Ivan Glinka's Romances", /Collection of methodological articles of Yerevan Komitas State Conservatory Professors, Volum 10/2019, "K. Debussy's Vocal-Chamber Works and Some Aspects of Their Performance", /Collection of methodological articles of Yerevan Komitas State Conservatory Professors, Volum 11/2021.

ԻՐԻՆԱ ՀԵԿՏՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
դոցենտ, դաշնակահար**

E-mail: ira.igrigoryan@mail.ru

Doi: 10.58580/29538041-2022.12-80

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Զ. Դ. Ղազարյանի և կոնցերտմայստերության ամբիոնի կողմից՝
(19.5.2023 թ.): Գրախոսների՝ (12.5.2023 թ.) և (16.5.2023 թ.),
հեղինակը ներկայացրել է հրատարակության՝ (2.5.2023 թ.):

Ս. Վ. ՌԱԽՄԱՆԻՆՈՎԻ «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՋՐԵՐ» op.14 No.11 ՌՈՍՄԱՆՍԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ

Ամփոփում

«Սերգեյ Ռախմանինովի «Գարնանային ջրեր» op.14 No.11 ռոմանսի կատարողական հարցերի շուրջ» ուսումնամեթոդական հոդվածում հեղինակն անդրադառնում է արդի երաժշտական կյանքում ամենատարածված ու ամենամեծ պահանջարկ ունեցող կոնցերտմայստեր-դաշնակահարի մասնագիտությանը: Ուսումնասիրության մեջ նա դիտարկում է կոնցերտմայստերի աշխատանքի առանձնահատկությունները փոկալ դասարանում և տալիս է կարևոր մեթոդական գործնական ցուցումներ: Հեղինակն առանձնացնում է այնպիսի կարևոր դրույթներ, ինչպիսիք են՝ թերթից ընթերցումն ու եռատող պարտիտուր կատարելու ունակությունը, անսամբլում աշխատանքի ու երգիչ-մենակատարի հետ համագործակցության առանձնահատկությունները: Հոդվածի զգալի մասը հատկացված է Ս. Վ. Ռախմանինովի «Գարնանային ջրեր» op.14 No.11 ռոմանսի մանրամասն վերլուծությանը, որը հանդիսանում է հետաքրքիր մեթոդական ուղեցույց կոնցերտմայստերին:

Բանալի-քառեր. Կոնցերտմայստեր-դաշնակահար, կատարողական խնդիրներ, երգչական արվեստ, փոկալ, դասարան, անսամբլ, եռատող պարտիտուր, երգիչ-մենակատար, Ռախմանինով, «Գարնանային ջրեր», ռոմանս:

Abstract

Pianist, accompanist, Associate Professor at Yerevan State Conservatory Irina Gekterovna Grigoryan. - "Some issues of performing the romance op.14

No.11 "Spring Waters" by Sergei Rachmaninov".

The author refers to the profession of an accompanist-pianist, which is extremely in demand and widespread in modern musical reality. In the study, the author examines the features of the work of an accompanist in the vocal class and provides important practical guidelines. The author highlights such important provisions as sight reading and the ability to perform a three-line score, methods of working in an ensemble and cooperation with a soloist. A significant part of the article is devoted to a detailed analysis of the romance op.14 No.11 "Spring Waters" by Sergei Rachmaninoff, which is an interesting methodological guide for a Concertmaster.

Key words: Pianist Concertmaster, performers tasks, vocal art, vocal class, three-line score, singer soloist, Rakhmaninov, "Spring Waters", romance.

Абстракт

Пианистка, доцент Ереванской государственной консерватории им. Комитаса Ирина Гекторовна Григорян. - «О некоторых вопросах исполнительства романса op. 14 No. 11 "Весенние воды" С. В. Рахманинова».

Автор обращается к крайне востребованной и распространенной в современной музыкальной реальности профессии концертмейстера-пианиста. В исследовании автором рассматриваются особенности работы концертмейстера в классе вокала и даются важные практические методические указания. Автор выделяет такие важные положения, как чтение с листа и умение исполнять трехстрочную партитуру, методы работы в ансамбле и сотрудничества с певцом-солистом. Значительная часть статьи посвящена подробному анализу романса op.14 No.11 «Весенние воды» Сергея Рахманинова, представляющего собой интересное методическое пособие для концертмейстера.

Ключевые слова: пианист-коцертмейстер, исполнительские задачи, вокальное искусство, вокальный класс, ансамбль, аккомпаниатор, трехстрочная партитура, певец-солист, Рахманинов, "Весенние воды", романс.

Ներածություն

Կոնցերտմայստեր-դաշնակահարի մասնագիտությունը երաժշտության բնագավառում համարվում է ամենատարածվածն ու ամենամեծ պահանջարկ ունեցողը:

Կոնցերտմայստերի լիարժեք գործունեությունը նախատեսում է նրա մոտ բազմապիսի որակներ՝ ուշադրության և հիշողության

մեծ ծավալների ընկալման ունակություն, ճկունություն և արագ կողմնորոշվելու կարողություն, հավասարակշռվածություն և կամքի ուժ, աշխատասիրություն, մանկավարժական տակտ և զգայունություն (1. էջ 9):

Կոնցերտմայստերի աշխատանքը վոկալ դասարանում

Երգեցողության դասարանում աշխատանքի պարագայում կարևոր է դաշնակահարի կողմից երգեցիկ ծայների առանձնահատկությունների իմացությունը:

Ե. Կուբանցկան առանձնացնում է կոնցերտմայստերի աշխատանքի մեջ մի քանի կարևոր փուլ.

1. Նոտային տեքստի տեսողական ընթերցում և երաժշտալսողական պատկերացում:

2. Ստեղծագործության նախնական վերլուծություն վոկալ և դաշնամուրային պարտիաների ամբողջական ընկալման նպատակով:

3. Ծանոթություն կոմպոզիտորի ստեղծագործական ուղու և նրա ոճական, ժանրային առանձնահատկություններին:

4. Ստեղծագործության ոճական առանձնահատկությունների բացահայտում:

5. Մանրակրկիտ աշխատանք տեխնիկական և կատարողական դժվարություններ պարունակող առանձին հատվածների վրա:

6. Ե՛վ նվագակցողի, և՛ մենակատարի պարտիաների վարժ տիրապետում:

7. Վոկալ պարտիայում առկա դժվարությունների հաղթահարում:

8. Ստեղծագործության գեղարվեստական կերպարի լիակատար բացահայտում:

9. Տվյալ ստեղծագործության համար՝ գտնել հատուկ արտահայտչամիջոցներ և կազմել ճիշտ պատկերացում դինամիկ և տեմպային նրբությունների վերաբերյալ:

10. Մենակատարի հետ անհրաժեշտ քանակի փորձերի առկայություն:

11. Համերգային կատարման ժամանակ պետք է հասնել տվյալ ստեղծագործության գեղարվեստական կերպարի ճշգրիտ մարմնավորմանը (1. էջ 8):

Թերթից ընթերցում

Կոնցերտմայստերի գործունեության կարևորագույն գործոններից մեկն է թերթից վարժ ընթերցելու ունակությունը: Գաղտնիք չէ, որ երբեմն կոնցերտմայստերին տրամադրվում է քիչ ժամանակ, նոտային տեքստին ծանոթանալու համար, հաճախ նրանից պահանջվում է նաև նվագել հանպատրաստից: Այսպիսով, դաշնակահարը պետք է արագ կողմնորոշվի նոտային տեքստի մեջ և կարողանա ընթերցել ստեղծագործության բնույթն ու տրամադրությունը:

Փոխադրման պարագայում նվագակցողը պետք է կարողանա արագ որոշել ակորդի տեսակը, նրա լուծումը, մեղեդիական թռիչքի ինտերվալը, տոնայնական պլանը և այլն:

Երբեմն դաշնակահարից պահանջվում է նվագակցել լսողությանը, ինչը միանշանակ իրենից ներկայացնում է ստեղծագործական պրոցես: Այս դեպքում կոնցերտմայստերը ստեղծում է իր ուրույն ֆակտուրայի տարբերակը, որի պարտադիր պայմաններից է երաժշտաստեղծագործական մտացողության առկայությունը:

Թերթից ընթերցելու կարողության ձևավորումը կապված է ներքին լսողության զարգացման և երաժշտական կերպարի բացահայտման հետ: Շատ կարևոր է ճիշտ վերլուծել երաժշտական ձևը, ստեղծագործության հարմոնիկ և մետրառիթմիկ կառուցվածքը, առանձնացնելով առաջնայինը՝ երկրորդականից: Կատարողը պետք է ընթերցի տեքստը ոչ թե «նոտա առ նոտա», այլ ամբողջականորեն, մեծ հնչյունային կոմպլեքսներով, խոսակցական տեքստի ընթերցման օրինակով: Նվագակցողը պետք է կարողանա դաշնամուրային ֆակտուրան մտովի «մասնատի», թողնելով միայն դաշնամուրային պարտիայի մինիմալ հարմոնիկ հենքը, արագ կողմնորոշվի և արձագանքի ստեղծագործության բնույթի, տեմպի, տոնայնության, դինամիկայում, ֆակտուրայում կատարվող փոփոխություններին:

Թերթից ընթերցումը մենակատար դաշնակահարի և կոնցերտմայստերի պարագայում խիստ տարբեր է: Եռատող պարտիտուրի պարագայում կատարողը պետք է կարողանա սեփական նվագը հարմարեցնի մենակատարին:

Հիմնվելով կոնցերտմայստերական դասարանում սեփական երկարամյա փորձի վրա, Ե. Շենդերովիչն առաջարկում է թերթից

ընթերցելու փուլային հետևյալ մեթոդիկան.

1. Նվագել միայն երգիչ-մենակատարի և բասի պարտիաները: Բացի սեփական պարտիայից դաշնակահարը սովորում է ուշադրության կենտրոնում պահել նաև մենակատարի ծայնաբաժինը:

2. Եռատող պարտիտուրի դեպքում կատարել նոտային տեքստը ոչ լիարժեք, հարմարեցնելով ակորդների դասավորությունը կատարողի հարմարությանը, պահպանելով հնչյունային կազմն ու ընդհանուր հարմոնիկ զարգացման տրամաբանությունը՝ կրճատելով կրկնապատկումները:

3. Դաշնակահարը պետք է ուշադիր ընթերցի վոկալ ստեղծագործության բանաստեղծական տեքստը, այնուհետև, նվագելով միայն մենակատարի ծայնաբաժինը, երգել այն կամ ռիթմիկ արտաբերել տեքստը, հատուկ ուշադրություն դարձնելով ցեզուրաներին (մեներգիչի ճիշտ շունչ վերցնելու համար) և տեմպի փոփոխություններին (դանդաղեցում, արագացում):

4. Դաշնակահարն ամբողջությամբ կենտրոնացնում է դաշնամուրային պարտիայի հմուտ կատարմանը և միայն դրանից հետո անդրադառնում մենակատարի ծայնաբաժնին (այն կարող է կատարել մենակատարը կամ նվագի/երգի դասախոսը կամ ինքը նվագակցողը) (1. էջ 6):

Մենակատարի հետ աշխատանքը

Կոնցերտմայստերի աշխատանքը վոկալ դասարանում ունի իր առանձնահատկությունները: Գաղտնիք չէ, որ վոկալ ստեղծագործության կերպարային բովանդակությունը բացահայտվում է ինչպես երաժշտության, այնպես էլ բանաստեղծական տեքստի միջոցով: Վոկալիստի հետ աշխատելիս կոնցերտմայստերը պետք է խորապես տիրապետի ոչ միայն երաժշտական, այլ նաև պոետիկ տեքստին: Իսկ ուսանողի կամ աշակերտի հետ աշխատանքի ընթացքում հետևի մեղեդու ծայնատարությանը, ռիթմիկ պատկերին, առոգանության ճշգրտությանը, մտածված ֆրազիորովկային և ճիշտ շնչառությանը:

Կախված ստեղծագործության բնույթից նվագակցության պարտիան մենակատարի պարտիայի հանդեպ լինում է երեք տիպի. նվագակցություն-օժանդակում, համադրում կամ հակադրություն: Այստեղից էլ ծագում է գաղափարական կապի երեք տեսակ՝ ֆոն,

երկխոսություն, կոնֆլիկտ: Դաշնակահարը պետք է կարողանա համապատասխան երանգ հաղորդի իր ծայնաբաժնին, ելնելով տվյալ ստեղծագործության մեջ մենակատարի և նվագակցողի պարտիաների փոխհարաբերությունների տեսակից:

Անսամբլ ստեղծելու գործում կոնցերտմայստերը պետք է հիշի երեք կարևոր բաղդրիչի մասին. ա) դինամիկ անսամբլ; բ) ռիթմիկ անսամբլ; գ) էնոցիոնալ անսամբլ (2. էջ 179):

Դինամիկ անսամբլ

Դինամիկ նրբերանգների ընդհանրությունն անսամբլի կարևորագույն պայմաններից է: Որպես նվագակցող գործիք դաշնամուրը պետք է հնչի ավելի մեղմ, քան երգեցիկ ծայնը: Երգչի հետ համագործակցության ընթացքում դաշնակահարը պետք է հաշվի առնի, որ ճիշտ հնչողությունից է կախված մենակատարի հաջողված ելույթը: Օրինակ, եթե դաշնակահարը իր նվագով չի օգնում մեներգչին կատարել *crescendo*, ապա ընդհանուր հնչողության ուժգնացման տպավորությունը թերի կլինի:

Պետք է նաև հաշվի առնել այն դեպքերը, երբ դաշնակահարի պարտիայում չկան դինամիկ նշանների փոփոխություններ, որոնք նշված են վոկալ պարտիայում: Կոնցերտմայստերը պետք է կարողանա նրբանկատորեն արծազանքել ծայնի պարտիայում առկա բոլոր փոփոխություններին:

Ռիթմիկ անսամբլ

Դաշնակահար-նվագակցողը պետք է ունենա բավականին զարգացած ռիթմի զգացողություն, որպեսզի կարողանա ստեղծել երգչի համար ռիթմական հենք:

Ռիթմական անսամբլի վրա աշխատանքն սկսվում է նախաբանի առաջին իսկ տակտերից: Դաշնակահարը միանգամից պետք է վերցնի ճիշտ տեմպ, որը ընդհանուր կլինի և՛ իր, և՛ մենակատարի համար: Դրա համար մինչ նվագելը նա պետք է կենտրոնանա և մտովի երգի վոկալ պարտիայի առաջին տակտերը (մեկ դարձվածքի շրջանակներում): Հակառակ դեպքում, դաշնակահարի նվագաբաժինը հնչում է մեկ տեմպում, իսկ երգչին՝ այլ:

Երգչական ստեղծագործության ռիթմի և ազդեցիկայի վրա աշխատելիս մեծ կարևորություն ունեն նաև պաուզաները: Դաշնակահարը պետք է շատ ճշգրտորեն «լրացնի» մենակատարին զուգընթաց պա-

ուզայի ժամանակը, չծփծփելով տեմպը, այլ պահպանելով ստեղծագործության ընդհանուր ռիթմիկ պատկերը (2. էջ 180):

Էմոցիոնալ անսամբլ

Բացի կատարողական պրոֆեսիոնալ հատկություններից կոնցերտմայստերը պետք է նաև ունենա զարգացած իմտուիցիա, մենակատարի տրամադրության ճիշտ ըմբռնում, նրբանկատություն, ճկունություն, որոնք ապահովում են անսամբլային միասնականությունն ու երաժշտական կերտվածքի գեղարվեստական ամբողջականությունը:

Շնչառություն

Երգչական նյութով աշխատելիս ուշադրություն պետք է դարձնել մենակատարի շնչառությանը: Ցանկալի է, որպեսզի մեներգեցողության դասախոսը նոտային տեքստում նախապես նշի շունչ վերցնելու հատվածները՝ կապված տեքստի և մեղեդային գծից: Կոնցերտմայստերի խնդիրներից է՝ օգնել երգչին համադաստրեն վերցնել շունչը, հաշվի առնելով բոլոր նրբությունները, որը անսամբլում աշխատելու կարևորագույն պայմաններից է: Այդ իսկ պատճառով, դաշնակահարի պարտականություններից է, տիրապետել երգաբաժնին և մտովի երգել կատարողի հետ: Միայն այս դեպքում, կարելի է խոսել կոնցերտմայստերի և մենակատարի համագործակցության մասին:

Դաշնակահարը պետք է հաշվի առնի նաև, որ ցանկացած շունչ վերցնելը դաշնամուրային պարտիայում նախատեսում է փոքրիկ հապաղում: Պրոֆեսիոնալ նվագակցողը կատարում է դա ունկնդրի համար աննկատ:

Ս. Վ. Ռախմանինովի «Փարնանային քրեր» օր.14 No.11 ռոմանսը. մեթոդական ուղեցույց կոնցերտմայստերին

Ռախմանինովի ստեղծագործության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում կամերային-վոկալ ժանրը, որում նա հանդես եկավ որպես քնարերգու մեծ վարպետ: Ռախմանինովյան վառ և միաժամանակ քնքուշ մեղեդայնությունը մերժեցնում է նրան Պ. Ի. Չայկովսկու հետ:

Կոմպոզիտորի արվեստում բնությունը պատկերող ռոմանսները ոչ միայն հանգիստ, հայեցողական բնույթի են, այլ երբեմն արտահայտում են կիրք, բուռն զգացմունքներ: Վառ օրինակներից է՝

«Գարնանային ջրեր» օր.14 No.11 ռոմանսը: Այն գրված է Ֆ. Տյուտչևի խոսքերով և նվիրված է կոմպոզիտորի առաջին ուսուցչուհի՝ Ա. Դ. Օրմատսկայային:

«Գարնանային ջրեր» ռոմանսը պատկանում է կոմպոզիտորի քնարական բնապատկերային ռոմանսների շարքին (նշենք՝ «Здесь хорошо», «Сирень» ռոմանսները և այլն): Ռոմանսը ռուսական գարնան երաժշտական պատկեր է, լի խանդավառությամբ և ցընծության զգացմունքներով. այն նկարագրում է բնության զարթոնքն ու գարնանային վերածնունդը: Պատահական չէ կոմպոզիտորի կողմից ընտրված կենսահաստատ և լուսավոր *Մի-բեմոլ* մաժոր տոնայնությունը: Գարնանային ցայտուն կերպարի ստեղծմանը նպաստում է նաև ռոմանսի գունեղ և հարուստ հարմոնիան:

Ռոմանսը գրված է սոպրանոյի և դաշնամուրի համար: Այն ունի օրիներգային բնույթ և առանձնանում է ձևի ազատ մեկնաբանմամբ, գույների հյութեղությամբ, փայլով ու դաշնամուրային շարադրանքի վիրտուոզությամբ: Հարուստ դաշնամուրային նվագակցության շնորհիվ կոմպոզիտորը կարողացել է փոխանցել վառ, ոգեշունչ զգացմունքները, վարար ջրերի կարկաչի գունեղ նկարագրումը:

Կարևոր է ընդգծել, որ «Գարնանային ջրեր» ռոմանսում խոսքի և երաժշտության միջև առկա ներդաշնակությունն ու միասնականությունը նպաստում են ստեղծագործության երաժշտական և բանաստեղծական կերպարների գեղարվեստական լիակատար արտահայտմանը: Տվյալ պարագայում Ռախմանինովի համար կարևոր է ոչ թե բանաստեղծական տողերի ուղիղ իմաստը, այլ այն «չարտահայտվածը», որը ավելի շուտ կարելի է կռահել ներքին զգացմունքով: Այսպիսով, կոմպոզիտորի կերտած երաժշտական կերպարը դառնում է անհամեմատ ավելի խորը, հարուստ և բովանդակալից:

«Գարնանային ջրեր» ռոմանսում կարելի է առանձնացնել 3 հակադիր բաժին: Առաջինում նկատվում է բնության զարթոնքը, ձնհալը, գարնանամուտի մոտալուտ լինելը: Երկրորդ (*Meno mosso*) բաժնում արագ տեմպը փոխարինվում է ավելի դանդաղ շարժումով, ինչն ստեղծում է գարնանային տաք օրերի սպասման զգացողությունը, որն էլ ավելի է սրվում ստեղծագործության վերջին երրորդ բաժնում (*Andante*):

Ռոմանսը բացվում է դաշնամուրային տպավորիչ նախաբանով և ավարտվում պաթետիկ մասշտաբային կոդայով: Դաշնամուրային նախաբանն առանձնանում է էներգիայով լի, հարուստ ռիթմիկայով, տեմբրային և հարմոնիկ գույների վառ փայլով: Տրիոլային ռիթմի շնորհիվ ստեղծվում է ձնհալի տեսարանը, առձակների հոսքի նմանակումը: Նվագակցության պարտիան նրբորեն լրացնում է մենակատարին և ունի վառ արտահայտված ծայնակարագրողական բնույթ:

Դաշնամուրի շքեղ «կոնցերտային» նվագաբաժինը, կարևոր դեր է խաղում ստեղծագործության ընդհանուր կենսահաստատ մթնոլորտի ստեղծման գործում: Հանդիսանալով ժամանակի լավագույն դաշնակահարներից մեկը, Ռախմանինովը հաճախ եղել է սեփական ստեղծագործությունների առաջին կատարողը: Ռախմանինովի կատարումն առանձնանում էր մեծ վարպետությամբ. վառ էքսպրեսիայով, տեմբրային նրբերանգների բազմազանությամբ և գունեղությամբ: Սակայն, տիրապետելով վիրտուոզային կերպով գործիքի բոլոր հնարավորություններին, կոմպոզիտորը, այնուամենայնիվ, միշտ առաջին պլան էր մղում գեղարվեստական բովանդակությունը:

Դաշնամուրի նախաբանի առաջին դարձվածքը ստեղծագործության ընթացքում ստանում է լայտթեմայի դեր: Պասաժների բուռն թռիչքը մեծացրած եռահնչյան էքսպրեսիվ հնչողության ներքո ստեղծում են վառ, ջրերի կարկաչը նկարագրող զարնան մթնոլորտ:

Նոտային օրինակ 1. Նախաբան
Note example 1. Preface
Нотный пример. 1. Введение





Առաջին բաժնում լսվում է ջրերի հոսքի ձայները, մոտալուստ գարնան հայտնվելը: 7-րդ տակտից սկսած (бегут и будят сонный бере), երաժշտությունը նոր թափ է առնում շնորհիվ վերընթաց շարժման և դինամիկայի ուժգնացման: Վոկալ պարտիայում իշխում են դեպի վեր սլացող, կամային բնույթի բացականչական մեղեդիական դարձվածքները:

Ռոմանսի երաժշտական զարգացման ընթացքում մի շարք մա-ծոր տոնայնությունների անսպասելի համադրումներն ստեղծում են կենսահաստատ, լավատեսական մթնոլորտ:

Չնայած ստեղծագործության ոչ մեծ ծավալներին, այն ունի երկու զագաթնակետ: Երգաբաժնի աստիճանաբար վերելքը դեպի բարձր ռեգիստր և դաշնամուրային պարտիայում ալտերացված հարմոնիաների գերակշռությունը բերում է հաստատական բացականչական առաջին զագաթնակետի՝ «Весна идет»: Երգաբաժնում հայտնվում է վերընթաց լայնաշունչ (դեցիմայի սահմաններում) կյանքի բերկրանքն արտացոլող դարձվածքը: Այն կառուցված է միևնույն սեքստակորդի հարմոնիայի վրա և մենակատարի երգաբաժնում ավարտվում է *fff*-ով երգվող անենաբարձր 2-րդ օկտավայի «լա դիեզ» նոտայով: Այս կերպարն ավելի լիարժեք է դառնում նախաբանի մոտիվի վրա հիմնված դաշնամուրային նվագաբաժնի վերընթաց շարժման ակորդների շնորհիվ (4. էջ 99):

Նոտային օրինակ 2. «Գարուն է գալիս»

Note example 2. “Spring is coming”

Нотный пример 2. “Весна идет”





Meno mosso բաժնից փոխվում է ստեղծագործության բնույթը, որը հակադրվում է նախորդ բաժնի երաժշտությանը, դառնում ավելի երազկոտ ու զուսպ: Այն սկսվում է դեկլամացիոն բնույթի «Вечна идет» խոսքերով (2-րդ օկտավայի «մի» նոտայի վրա): Հնչողությունը հետզհետե մարում է, տեմպը դանդաղում, ինչն էլ ավելի է ընդգծում մայիսյան տաք օրերի սպասումը: Լրացնելով միմյանց, երգչական և դաշնամուրային նվագաբաժիններն այս մասում միաձուլվում են, ստեղծելով մեկ ամբողջական կերպար:

Նվագակցության հանգիստ, ալիքաձև շարժումը, որի հարմոնիկ լեզուն շատ մոտ է իմպրեսիոնիստների գրելաոճին, որպես ֆոն է ծառայում աջ ձեռքում հնչող արտահայտիչ մեղեդիական դարձվածքի համար:

Meno mosso բաժնից սկսած կոնցերտմայստերը պետք է հատուկ ուշադրություն դարձնի դաշնամուրային նվագաբաժնում առաջացած տասնվեցերորդականներով զուներդ պասսաժներին, ինչպես նաև զերծ մնա ավելորդ շտապողականությունից և կատարման ընթացքում իրարանցում ստեղծելուց (4. էջ 103):

Նոտային օրինակ 3. *Meno mosso*

Note example 3. *Meno mosso*

Нотный пример 3. *Meno mosso*





Միջին բաժինը և *Andante*-ն իրար միանում են դաշնամուրային ինտերլյուդով: *Andante* բաժնից սկսվում է զարգացման նոր ալիք՝ շարժումը հետզհետե արագանում է. ութերորդականները փոխարինվում են տրիոլներով, ակորդների նուրբ շարժումը վերաճում է դաշնամուրային նվագաբաժնում էներգիայով լի վերընթաց սեկվենցիաների, որոնք հանգեցնում են երկրորդ՝ զուտ գործիքային բնույթ ունեցող բարձրակետի:

Հզոր դաշնամուրային կողան գրված է *Allegro vivace* տեմպում, ինչը խորհրդանշում է բնության վերջնական զարթոնքը ծմեռային քնից հետո: Այն հիշեցնում է կոմպոզիտորի դաշնամուրային կոմպերտների պաթետիկ վիրտուոզային էպիզոդները: Մեներգչի վերջին՝ *fff* վրա 2-րդ օկտավայի «մի բեմոլ» հնչյունը ձուլվում է վարընթաց ակորդների հագեցված «նվագախմբային» հնչողության հետ: Այստեղ դաշնակահարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի գործիքի հնչողությանը՝ այն պետք է «երգի», այլ ոչ թե ստեղծի «հարվածային» գործիքի տպավորություն:

Նոտային օրինակ 4. *Allegro vivace*

Note example 4. Allegro vivace

Нотный пример 4. *Allegro vivace*





Ռոմանսն ավարտվում է լույսի և արևի հանդիսավոր հաղթանակով:

Վերջաբան

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ «Գարնանային ջրեր» ռոմանսը կատարելիս կոնցերտմայստերից պահանջվում է տիրապետել ոչ միայն դաշնամուրային կատարողական փայլուն տեխնիկային, այլ ներթափանցել բանաստեղծության բովանդակության մեջ, փոխանցել ունկնդրին երաժշտության ընդգրկուն գաղափարն ու շարադրանքի մասշտաբայնությունը:

Ընդհանրապես, Ռախմանինովի վոկալ ստեղծագործություններում դաշնամուրային նվագաբաժինը հազվադեպ է կրում զուտ նվագակցության դեր: Հիմնականում այն առանձնանում է մանրակրկիտ կերպով մշակված և հագեցած ֆակտուրայով: Երբեմն, ստանալով կոնցերտային թափ, դաշնակահարից պահանջում է մեծ կատարողական հմտություն: Այսպիսով, այն իր կարևորության աստիճանով և արտահայտչականությամբ հավասարվում է մեներգչի երգաբաժնին, դառնալով վոկալ պարտիայի մրցակիցը, իսկ երբեմն՝ զուգընկերը: Պատահական չէ, որ հենց դաշնամուրային նվագաբաժնին է հանձնարարվում ստեղծագործության կառուցվածքը եզերող նախաբանն ու վերջաբանը, իսկ երբեմն նաև ինտերյուդները:

Գերակշռող դեպքերում դաշնամուրային նվագաբաժինն իր վրա է վերցնում հիմնական արտահայտչականությունը, դառնում է շարադրման հենարանը, կազմավորում է երաժշտական ձևի կմախքը: Պատահական չէ, որ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովը բնորոշել է ռախմանինովյան ռոմանսները որպես կամերային-վոկալ արվեստի նեղ շրջանակները գերազանցող ժանր: «Ռախմանինովի ռոմանսների մեծ մասի նվագակցությունը չափազանց բարդ է դաշնամուրային կատարողականության տեսանկյունից: Երբեմն հանդիպում ենք ռոմանսներ, որտեղ ստեղծագործության հիմնա-

կան զաղափարը և գեղարվեստական հետաքրքրությունը գետեղված է ոչ թե վոկալ, այլ դաշնամուրային նվագաբաժնում: Այսպիսով, կարող ենք դրանք մեկնաբանել որպես դաշնամուրային պիեսների ծայնի մասնակցությամբ» (5. էջ 134):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Никулина Е. В.*, Методическая разработка на тему: «Специфика работы концертмейстера в классе академического вокала», Курск., 2019.
 2. *Карапетян А.*, Ансамбль солиста-вокалиста и концертмейстера-пианиста: специфика совместной деятельности /Анна Карапетян, // *Tradiție și inovare în cercetarea științifică*, Ediția a 5-a: Materialele Colloquia Professorum din 10 octombrie 2014. – Bălți. – 2015. – P. 179-182.
 3. *Дергачева Э.*, Изучение ранних романсов С.В.Рахманинова в классе концертмейстерского мастерства., /Ташкент: Государственная консерватория Узбекистана., 2018.
 4. *Русанова Н.А.*, Камерно-вокальное творчество С.В. Рахманинова., Тема диссертации и автореферата по ВАК РФ 17.00.02., 2006., 158 с.
Nikulina E.V., Methodological development on the topic: "The Specificity of Concertmaster's Work in Academic Vocal Class", Kursk, 2019.
Karapetyan, Anna. Ensemble of Soloist-Vocalist and Concertmaster-Pianist: the specificity of joint activity / Anna Karapetyan // *Tradiție și inovare în cercetarea științifică*, Ediția a 5-a: Materialele Colloquia Professorum din 10 octombrie 2014. – Bălți. – 2015. – P. 179-182.
- Dergacheva E.*, The Study of S.V. Rakhmaninov's Early Romances in the Class of Concertmaster Training / Tashkent: Uzbekistan State Conservatory, 2018.
- Rusanova N.A.*, S.V. Rachmaninov's Chamber and Vocal Works, Topic of the dissertation and abstract on the HAC of RA 17.00.02., 2006, 158 p.

REFERENCES

1. *Nikulina E.V.*, Metodicheskaya razrabotka na temu: "Specifika raboty koncertmejstera v klasse akademicheskogo vokala", Kursk., 2019.
2. *Karapetyan Anna.*, Ansambl' solista-vokalista i koncertmejstera-pianista: specifika sovmestnoj deyatel'nosti /Anna Karapetyan // *Tradiție și inovare în cercetarea științifică*, Ediția a 5-a: Materialele Colloquia Professorum din 10 octombrie 2014. – Bălți. – 2015. – P. 179-182.
3. *Dergacheva E.*, Izuchenie rannikh romansov S. V. Rakhmaninova v klasse koncertmejsterskogo masterstva /Tashkent: Gosudarstvennaya konservatoriya Uzbekistana., 2018.
4. *Rusanova N.A.*, Kamerno-vokal'noe tvorchestvo S. V. Rakhmaninova., Tema dissertatzii i avtoreferata po VAK RF 17.00.02., 2006., 158 s.

Հեղինակի մասին. տե՛ս էջ 79: Օճ աեմոբ, ցմ. ց. 78. About the author, Go to. 79.

**ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ**

**DEPARTMENT
OF ACADEMIC SINGING**

**КАФЕДРА
АКАДЕМИЧЕСКОГО ПЕНИЯ**

ԼԻԼԻ ՀԵՆՐԻԿԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**Երգչուհի, Երեսանի Կոմիտասի անվան պեդագոգական
կոնսերվատորիայի դասախոս**

E-mail: markosyanlili4@gmail.com

Doi. 10.58580/29538041-2022.12-95

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գ. Պ. Գեղամյանի և Ակադեմիական երգեցողության ամբիոնի կողմից՝ (17.05.2023 թ.): Գրախոսներ՝ (20.03.2023 թ.) և (19.03.2023 թ.) հեղինակը ներկայացրել է նոտային օրինակներ հրատարակությամբ՝ (17.9.2022 թ.):

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ամփոփում

Սույն հոդվածում ներկայացվում է ակադեմիական երգեցողության դասավանդման մեթոդների որոշ դրույթներ: Հոդվածի նպատակներից մեկը երիտասարդ դասավանդողներին և ուսանողներին հաղորդել գիտելիքներ, զարգացնել նրանց ունակությունները, որոնք կօգնեն ձայնադրման սկզբնական պարապմունքների ժամանակ: Հոդվածագրի կողմից առաջարկվում են տարիների փորձառության ընթացքում մշակված և հղված ձայնավարժություններ, որոնք կոչված են զարգացնելու ձայնի դրվածքը և երգչական ապարատը:

Բանալի-բառեր. շնչառություն, վարժություններ, ձայնաձավալ, հնչյունաւարարերում, կատարում, գլխային հնչողություն, ունակություններ:

Abstrakt

Singer, lecturer of Yerevan Komitas State Conservatory Lili Henrik Markosyan. - “Methods of Teaching Academic Singing”.

This article presents some principles of teaching methods of academic singing. One of the aims of the article is to impart knowledge to young teachers and students, to develop their abilities, which will help them during the initial singing lessons. The author of the article proposes vocal exercises, developed and refined over years of experience, which are designed to develop the voice setting and the singing apparatus.

Key words: *breathing, exercises, range, volume, sound articulation, performance, head sound, skills.*

Абстракт

Певица, преподаватель Ереванской государственной консерватории Лили Генриковна Маркосян. - “Методы преподавания академического пения”.

В данной статье представляются некоторые методы преподавания академического пения. Цель статьи - развивать навыки у студентов, которые помогут во время начальных занятий и постановки голоса и передать знания и эстафету молодым преподавателям. Автором статьи рекомендуются упражнения, проверенные многолетней преподавательской практикой, для развития вокального аппарата и постановки голоса.

Ключевые слова. *дыхание, упражнения, диапазон, звукоизвлечение, исполнение, головное звучание, способности.*

Ներածություն

Վոկալ արվեստի նկատմամբ հետաքրքրությունը շատ մեծ է մեր օրերում, քանի որ սովորողները վաղ հասակից են սկսում իրենց մասնագիտական կրթությունը, հաճախելով տարբեր երաժշտական կրթօջախներ: Մասնավարժների առջև խնդիր է դրվում առավել ուշադիր անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր սովորողին, ըստ իր ընդունակությունների, զարգացածության և խառնվածքի:

Առաջադրվող մեթոդների հիմնական նպատակը

Մեր նպատակն է օգնել ուսանողին անհատական մոտեցմամբ բացահայտելու ձայնածավալը և զարգացնելու այն: Օպերային երգեցողության տեխնիկայի ուսուցումը ներառում է շնչառական վարժություններ, որոնք ընդլայնում են ձայնածավալը, ուժգնությունը և արտիկուլյացիայի ապարատը: Սովորողին ուսուցանել առանց արհեստական արտահայտչականության, արտաբերման ազատ զգացողությամբ, բնական վերարտադրել իր ձայնը: Այնուհետև զարգացնում ենք կատարման տեխնիկան և դինամիկան: Պետք է ազատվել ավելորդ լարվածությունից, որպեսզի կար-

գավորվի շնչառական ապարատի լիարժեք գործառույթը: Գեղեցիկ և որակով ծայնն իհարկե բնածին է լինում, բայց այն պետք է ամեն օր մարզել:

Վարժեցնելով մեր մարմնի գրեթե բոլոր մկանները, հատկապես բերանի խոռոչի, որովայնի և կրծքավանդակի մկանները՝ որակյալ ծայն ստանալու համար: Շնչառության՝ օդի հոսքի էներգիայով, կառավարման շնորհիվ ծայնը հոսում է դեպի գլխային հնչողություն, որին նպաստում են բերանի խոռոչի ռեզոնատորները, որոնց շնորհիվ առաջանում է բարձրածայն երգեցողություն:

Ուսուցչի նպատակն է՝ լսողությամբ որոշել ուսանողի ծայնին համապատասխանող հնչեղ ծայնավորը, այնուհետև պահպանելով ձեռք բերած զգացողությունը՝ երգել վարժությունն այլ ծայնավորներով: Պետք է շնչառությամբ՝ ներշնչելով, գտնել և մտապահել ծայնավորների կատարման պահին բերանի խոռոչի փափուկ քիմքի դիրքերը: Ձևավորվում է ծայնի դիրքը, ծայնն աստիճանաբար ձեռք է բերում թռիչքային ուժգնություն և մեծ ծավալ: Հաջողությունն ամենօրյա հետևողական աշխատանքի արդյունքն է:

Հոդվածի նպատակներից մեկը երիտասարդ դասավանդողներին և ուսանողներին հաղորդել որոշ գիտելիքներ, որոնք կօգնեն ծայնադրման սկզբնական աշխատանքի համար: Ձայնավարժությունների կատարումը նպաստելու է կատարողական բարձր որակի երաժիշտ դաստիարակելուն:

Ուսանողի պարապմունքի և ինքնուրույն պարտադիր աշխատանքի որոշակի ժամանակը պետք է հատկացված լինի ծայնավարժություններին:

Անհրաժեշտ է սկսել աշխատել ծայնածավալի միջին ծայնասահմանից՝ երգչի ծայնի ամենահնչեղ հնչյունից, որպեսզի համապատասխան ծայնի բարձրության պահպանմամբ, երգելով կառուցի ավելի բարձր հնչյուններ կամ հակառակը՝ ավելի ցածր: Շատ կարևոր է անցումները երգել լեզատո՝ սահուն և աննկատ, պահպանել հնչողության միևնույն դիրքն ու երգվող հնչյունի երանգը:

Երգիչների մեծամասնությանը հարմար է երգել կլորացված բերանով «ա» ծայնավոր հնչյունը (հետևել, որ բերանի խոռոչում խորը դիրքով չերգվի): «Ի» հնչյունը երգելիս ապահովում է վերին

քիմքի բարձր դիրքը, այն հավաք է վերին քիմքի ռեզոնատորում: Միաժամանակ ամիրաժեշտ է ակտիվացնել՝ ամուր պահելով որովայնի և ստոծանու մկանները: Հետևաբար օդի շիթը նաև ստոծանու մկանների աշխատանքն ապահովում է որովայնային շնչառությունը (1. էջ 58-80), որն էլ իր հերթին ապահովում է ճնշման մղման հավասարեցումը կրծքավանդակի խոռոչներում: Պետք է միշտ փորձել տարբեր ծայնավորներ երգել՝ ընտրել հարմարը և լավագույնը, որը կբացահայտի ծայնի տեմբրային որակները:

Զայնավարժություններն էլ մեզ կիռնեն տվյալ երգիչ-կատարողի ծայնի տեսակը, որոնք աստիճանաբար հղկելով, ուսանողը ձեռք կբերի հմտություններ, այնուհետև կանցնի վոկալիզների երգեցողությանը (2.):

Վոկալիզները հանձնարարելով պետք է ուսանողին սովորեցնել ինքնուրույնություն և վստահություն:

Շատ կարևոր է ուշադիր լինել երգեցողության շնչառությանը: Սկսնակ երգիչ-կատարողներին բացատրել կրծքա-որովայնային շնչառությունը, հետևել, որ դա լինի բնական զգացողությամբ: Վարժությունները կարևոր է կատարել, շնչառության ամրապնդման համար: Շնչառության վարժություն, օրինակ. ներշնչել օդը, պահել ամուր ստոծանին (1. էջ 59-64), ապա դանդաղ արտաշնչել: Ուշադրություն դարձնել որ օդի շիթը աստիճանաբար վատնվի և կողոսկրերը և կրծքավանդակը արագությամբ չիջնեն: Պետք է կրծքավանդակում պահված օդը արտաշնչել այնպես, որ օդի պաշար մնա: Կարելի է վարժությունը կատարել նաև ձայնավոր հնչյուններ արտաբերելով, միաժամանակ հետևել, որ կոկորդը լարված չլինի և պահել վիզը հանգիստ դիրքում: Ներշնչելիս ընդարձակվում է կրծքավանդակը, բարձրանում են կողերը և ստոծանու մկանաթելերի կծկումով իջնում է ստոծանու գմբեթը՝ այսինքն տեղի է ունենում օդի հոսքի արտամղում (1. էջ 63): Արտաշնչումն էլ պետք է առանց լարման լինի, որպեսզի երգելիս կառավարենք օդի շիթի հոսքը մինչև ֆրագի՝ մտքի ավարտը հասցնելուն:

Վոկալ կեցվածքը

Յուրաքանչյուր երգչի երգչական կեցվածքն ապահովում է բնական ծայնի արտաբերումը: Երգելով ամրապնդում ենք մարմնի հան-

